

ՅԱԻԵԼՈՒԱԾ „ԱՐԱՔՍ“ ՀԱՆԴԻՍԻ

Յ. ԴՐՍՏՈՇԻՍԿԻ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ՄԵՌԵԱԼ ՏԱՆԻՑ

THE HISTORY OF

THE

REIGN OF

HENRY THE FIRST

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

1890

1890

1890

1890

1890

1890

1890

1890

1890

1890

1890

1890

1890

1890

1890

1890

1890

1890

1890

1890

1890

Ն Ա Խ Ե Ր Գ Ա Ն Ք

Սիրբի Տեառնոր կողմերում՝ տափաստանների, սարերի կամ անանցանելի անտառների մէջ՝ մէկ-մէկ պատահում են փոքրիկ քաղաքներ, մի՛ շատ շատ՝ երկու հազար բնակչով, փայտաշէն, անշուք, երկու եկեղեցով—մինը քաղաքում, միւսը ղերեղմաններում, —քաղաքներ՝ որ աւելի Մոսկուայի մօտակայ շէն աւաններին են նմանում, քան թէ քաղաքի: Նրանք սովորաբար լեքն են լինում գաւառական կառավարիչներով, ընթերականերով և մնացած ստորին ամեն կարգի աստիճանաւորներով: Առհասարակ Սիրբիում՝ չընայելով ցըրտին՝ պաշտօնեաների տեղը շատ տաք է: Ապրում են պարզ և ոչ ազատամիտ մարդիկ, կարգերը՝ հին, հաստատ, դարերով նուիրագործուած: Աստիճանաւորները, որ իրաւամբ Սիրբի աղնուականութեան դերն են խաղում, կամ տեղացիք են՝ բնիկ սիրբացիք, կամ Ռուսաստանից՝ շատը մայրաքաղաքներից՝ եկածներ, որոնք հրապուրուել են սովորականից աւելի ռոճկով, կրկնակի ծանապարհածախքով ու ապագայի շլացուցիչ յոյսերով: Նրանցից ով կարողանում է կեանքի հանելուկը լուծել՝ զրեթէ միշտ մնում է Սիրբիում և ուրախութեամբ այնտեղ բուն դնում: Այդպիսիները վերջը ճոխ ու քաղցր պտուղներ են տալիս: Բայց միւսները, թեթեւամիտ ու կեանքի հանելուկը լուծելու անկարող մարդիկ, շուտով ձանձրանում են Սիրբիից և անձկութեամբ հարցնում

իրանք իրանց. «ինչո՞ւ եկան նրանք այդտեղ»: Անհամբեր նրանք լրացնում են պաշտօնի օրինաւոր ժամանակամիջոցը, երեք տարին, որից յետոյ իսկոյն և եթ հոգում են, որ փոխադրուեն և իրենց տեղերն են վերադառնում՝ հայհոյելով Սիբիրը ու վերան ծիծաղելով. բայց նրանք սխալվում են, ոչ միայն պաշտօնի՝ այլ մինչև իսկ շատ կողմերից Սիբիրում կարելի է երջանիկ ապրել: Կլիման հիանալի է. կան շատ երևելի հարուստ ու աղուհացով վաճառականներ. շատ են և խիստ ունեւոր այլադղիներ: Օրիորդները ծաղկում են վարդի պէս և մինչև իսկ չափազանց բարոյական են: Որսը փողոցներումն է թռչկոտում և ինքն իրեն է որսորդի առաջին ընկնում: Շամպանեան անասելի շատ են խմում: Խաւարը հրաշալի է: Նունձը տեղ-տեղ մէկին առանուհինգ է տալիս... ընդհանրապէս օրհնուած է հողը: Միայն պէտք է գիտենան շահուել նրանից: Եւ Սիբիրում գիտեն շահուել:

Այսպիսի ուրախ ու դուռնակ քաղաքներից մինում՝ մի ամենագուրեկան աղղարնակութեամբ, — որի յիշատակը անջնջելի կըմնայ սրտումս, — ես պատահեցի նորագաղթ Ալէքսանդր Պետրովիչ Գորեանչիկովին, որ Ռուսաստանում ագնուական և կալուածատէր էր ծնուել, յետոյ կնոջ սպանելու համար երկրորդ կարգի առժանակիր-աքսորական դառել և առժանակիր աշխատութեան օրէնքի սահմանած սասնամեայ ժամանակն անցնելուց յետոյ՝ հանդարտ ու անձայն իր կեանքը վարում էր Կ. քաղաքում, իբրեւ նորագաղթ: Նա իսկապէս զրուած էր քաղաքի մօտակայ մի զաւառամասի վերայ, բայց կենում էր քաղաքում՝ կարողանալով այնտեղ գէթ որ և է ապրուստ ճարել երեսաներին դասեր տալով: Սիբիրի քաղաքներում շատ են պատահում ուսուցիչներ աքսորեալ նորագաղթներից. նրանցից չեն խորշում: Նրանց սովորեցրածն էլ աւելի ֆրանսերէնն է, որ այնքան անհրաժեշտ է կեանքի ասպարիզում և որի վրայ Սիբիրի հեռաւոր կողմերում զաղափար էլ չէին ունենայ առանց նոցա: Առաջին անգամ Ալէքսանդր Պետրովիչն պատահեցի մի վաղուցուայ, արժանաւոր ու աղուհացով պաշտօնեայի՝ Իվան Իվա-

նիչ Գովոզիկովի տանը, որ ունէր Հինգ աղջիկ այլ և այլ Հասակի՝ բոլորն էլ զեղեցիկ յոյսեր տուող։ Ալէքսանդր Պետրովիչը նրանց դաս էր տալիս՝ շաբաթը չորս անգամ, դասը երեսուն կողէկ արծաթով։ Նրա կերպարանքն ինձ Հետաքրքրեց։ Նա չափազանց դունատ և լղար մարդ էր, դեռ չքծերացած, մօտ երեսուն ու Հինգ տարեկան, փոքրիկ և նիհար։ Հաղնուած էր լինում միշտ շատ մաքուր, ըստ եւրոպականին։ Եթէ սկսէիք նրա Հետ խօսել, նա սաստիկ յառած աչքերով և ուշադիր ձեզ կընայէր, խիստ քաղաքավարութեամբ ականջ կանէր ձեր ամեն մի խօսքին՝ կարծես խորասուլունելով նրանց մէջ և կարծես ձեր Հարցով նրան մի խնդիր տուեցիք լուծելու կամ թէ ուզում էք նրանից մի զաղանիք դուրս քաշել, և վերջը, կրպտասխանէր պարզ և կտրուկ, բայց այնքան կշռելով իւր պատասխանի ամեն մի խօսքը՝ որ դուք ձեզ մի տեսակ վատ կըզդայիք և, վերջապէս, ինքներդ կ'ուրախանայիք, որ խօսակցութիւնը վերջացաւ։ Ես Հէնց այն ժամանակ նրա վերայ Հարցութիւն արի Իվան Իվանիչին և իմացայ, որ Գորեանչիկովը անպարսաւ ու բարոյական կեանք է վարում և որ այլապէս Իվան Իվանիչը նրան չէր կանչի իւր աղջիկներէ Համար. նա, սակայն, մարդկանցից անչափ քաշուող է, ամենքից թաքցում է, չափազանց զիտուն է, շատ կարգում է՝ բայց թէ շատ քիչ է խօսում և որ նրա Հետ առՀասարակ բաւական դժուար է խօսակցութիւն ունենալ։ Կային՝ որ պնդում էին թէ նա իսկ որ խելագարուած է, թէև Համարում էին, որ դա իսկապէս մի այնքան էլ մեծ պակասութիւն չի. որ քաղաքի պատուաւոր անդամներից շատերը պատրաստ են ամեն կերպ սէր ցոյց տալ Ալէքսանդր Պետրովիչին, որ նա նոյն իսկ օգտուէտ կարող էր լինել, խնդրագրեր գրել և այլն. կարծում էին որ նա Ռուսաստանում կ'ունենայ բաւականաչափ ազդականներ, թերևս նոյն իսկ ոչ յետին մարդիկ, բայց զիտէին որ Հէնց աքսորուելու օրից յամառութեամբ կտրել է նրանցից ամենայն յարաբերութիւն,—մի խօսքով՝ իրեն մնասում է։ Մեղնում էլ Հօ բոլորը զիտէին նրա պատմութիւնը, զիտէին որ

նա կնոջը սպանել է ամուսնութեան հէնց առաջին տարին, սպանել է խանդոտութիւնից և ինքն էլ իր մասին գնացել յայտնել է (որից և շատ թեթեացել է նրա պատիժը): Իսկ այդ տեսակ ոճիրների վրայ միշտ նայում են ինչպէս անբախտութիւնների վերայ, և ցաւում են: Բայց չընայելով այս ամենին, այդ խենթը յամառութեամբ հեռու էր քաշվում ամենքից և մարդկանց մէջ երևում էր միայն դաս տալու համար:

Ես սկզբում մի առանձին ուշադրութիւն չէի դարձնում նրա վերայ. բայց՝ ինքս էլ չըզխտեմ ինչու նա քիչ-քիչ սկսեց ինձ հետաքրքրել: Մի տեսակ հանելուկ էր այդ մարդը. նրա հետ խօսակցութիւն ունենալու ոչ մի հնարաւորութիւն չէկար: Ի հարկէ, նա իմ հարցերին միշտ պատասխանում էր և մինչև անգամ այնպիսի գէմքով, որ կարծես իրեն ամենաառաջին պարտականութիւնը համարելիս լինէր այդ բայց նորա պատասխաններից յետոյ ինձ մի տեսակ ծանր էր լինում շարունակել հարցով փորձը. բացի այդ էլ՝ նրա երեսին այդպիսի խօսակցութիւններից յետոյ միշտ նըշմարվում էր մի տեսակ տանջանք և յոգնածութիւն: Յիշում եմ, մի օր՝ մի գեղեցիկ ամառային երեկոյ՝ ես զընում էի նրա հետ Իվան Իվանիչի տանից: Յանկարծ խելքիս փչեց որ նրան մի բոպէ իմ տունը հրաւիրեմ զլանակ ծխելու: Զեմ կարող նկարագրել, թէ ինչպիսի սարսափ տիրեց նրա երեսին. նա բոլորովին իրեն կորցրեց, սկսեց մրմնջել մի ինչ որ անկապ խօսքեր և յանկարծ՝ չարացած վրաս նայելուց յետոյ՝ գլուխն առաւ հակառակ կողմը փախաւ: Ես մինչև անգամ զարմացայ: Այն օրից՝ ինձ հանդիպելիս նա կասես մի տեսակ ահով էր նայում վերստ: Բայց ես չըհանգստացայ. մի բան ինձ քաշում էր դէպի նա, և մի ամսից յետոյ առանց այլևայլութեան, ինքս մտայ Գորեանի կողմ տունը: Հասկանալի է՝ որ յիմար ու անզգոյշ բան արեցի: Նա կենում էր քաղաքի այն ծայրումը, մի պառաւ հասարակ կնոջ մօտ, որն ունէր թոքախտով հիւանդ մի աղջիկ, իսկ սա ապօրինի մի դուստր, որ կը լինէր մի տասը տարեկան երեխայ, — մի սիրունիկ, մի ուրախ զուարթ աղջիկ:

Ալէքսանդր Պետրովիչը նրա մօտ նստած կարդալ էր սովորեցնում՝ երբ ներս մտայ ես: Նա՝ ինձ տեսնելով՝ այնպէս շփոթուեց, որ կասես նրան մի ոճիր գործելիս բռնեցի: Նա բոլորովին գլուխը կորցրեց, աթոռից վեր թռաւ և աչքերը լայն բացած՝ վերաս էր նայում: Մենք վերջապէս նստեցինք: Նա ուշի ուշով հետևում էր իմ ամեն մի հայեացքին, կարծես ամեն մինը մի առանձին խորհրդաւոր իմաստ էր ունենալու: Ես գլխի ընկայ՝ որ նա խելագարութեան չափ կասկածոս է եղել: Նա ատելով էր նայում վերաս և քիչ էր մնում հարցնի. «վերջապէս շո՛ւտ կրճնաս այստեղից»: Ես խօսք բաց արի մեր քաղաքի վրայ, առօրեայ նորութիւնների վրայ, նա շարունակ լսում էր և չարացած ժպտում. երեւոյ՝ որ նա ոչ միայն չի իմացել ամենասովորական, ամենքին յայտնի քաղաքային նորութիւնները, այլ չի էլ հետաքրքրուել իմանալու: Յետոյ խօսք բաց արի մեր երկրի, նրա կարիքների վրայ՝ նա լուռ տկանջ էր դնում ինձ և այնքան օտարօտի կերպով էր նայում աչքերիս, որ վերջապէս ես ամաչեցի մեր խօսակցութիւնից: Բայց և այնպէս, քիչ մնաց որ նրա հետաքրքրութիւնը շարժէի ձեռքումս եղած նոր զրքերով ու ամապղիւրներով, որ Հէնց նոր էի թղթատարից ստացել և դեռ չըկտրած առաջարկում էի: Ազա՜հ աչքերով նա մէկ նայեց նրանց վրայ, բայց նոյն րոպէին էլ միտքը փոխեց և առաջարկութիւնս մերժեց՝ ժամանակ չունեմ ասելով: Վերջապէս նրան մնաս բարեւ ստացի և դուրս դալուց յետոյ զգացի՝ որ սրտիցս մի անտանելի ծանրութիւն ընկաւ: Ես ամաչեցի և աչքումս չափազանց յիմար երեւացի, որ կպչում եմ մի մարդու վզից, որը իր ամենադիւսաւոր նպատակն է դրել խկապէս որքան կարելի է հեռու կենալ ամենքից. բայց բանը արել պրծել էի: Յիշում եմ որ նրա մօտ գրեթէ բոլորովին զիրք չտեսայ և ուրեմն ճիշտ չէին ասում՝ թէ նա շատ է կարդում: Սակայն մի երկու անգամ նրա պատուհանների մօտովը գիշերը շատ ուշ անցնելիս՝ նկատեցի որ լոյս է երևում այստեղից: Բա ի՞նչ էր անում նա՝ մինչև ծէզը նստած: Արդեօք չէ՞ր գրում: Իսկ եթէ այդպէս է. ի՞նչ էր գրում ուրեմն:

Հանդամանքները երեք ամսով ինձ Հանեցին մեր քաղաքից: Արդէն ձմեռը տուն դառնալով իմացայ որ Ալէքսանդրը Պետրովիչը աշնանը մեռել է, մեռել է առանձնութեան մէջ և մի անգամ էլ բժիշկ չի կանչել: Քաղաքումը նրան գրեթէ մոռացել էին: Նրա բնակարանը դարտակ ընկած էր. ես անյապաղ ծանօթացայ Հանդուցեալի տան տիրուհու Հեա, միաք ունենալով նրանից իմանալ, թէ ինչով էր աւելի պարագում նրա տնուորը և արդեօք բան-ման չէր գրում: Քսան կոպէկով նա ինձ բերեց մի տեփուր լիքը թղթեր՝ Հանդուցեալից Գնացած: Պառաւը խոստովանուեց, որ երկու տետրակ արդէն փչացրել է: Դա մի խոժոռ ու քիչ-խօսող պառաւ էր, որից զժուար էր մի կարգին բան դուրս քաշել: Իր տնուորի վրայ նա ինձ այնքան էլ մի նոր բան ասել չբողացաւ: Նրա ասածով նա գրեթէ երբէք բան չէր շինում և ամիսներով զիրք չէր բաց անում ու ձեռքը զրիչ չէր առնում: Այն ինչ ողջ ղիշերները սենեակում ման էր գալիս յեա ու առաջ և Հոս մտածում էր, երբեմն էլ իրան-իրան խօսում՝ թէ նա շատ սիրեց և շատ դուրգուրում էր իր թոռնիկին, Կատիային, մանաւանդ՝ երբ իմացաւ որ նրա տնուէն Կատիայ է, և թէ Կատարինէի աօնին ամեն անգամ գնում էր՝ մէկի Հոգեհանգիստը կատարում: Նիւրերին ախորժել չէր կարող. սանից դուրս էր գնում միայն դաս տալու Համար: Իրեն՝ պառաւին էլ՝ խէթ-խէթ էր նայում, երբ ինքը շաբաթը մի անգամ գալիս էր որ զոնէ մի փոքր նրա սենեակը սրբի, և գրեթէ երբէք՝ երեք տարի շարունակ մի Հատիկ խօսք չի ասել իրեն: Նարցրի Կատիային՝ թէ յիշում է նա իր ուսուցչին: Նա լուռ ինձ մտիկ տուեց, երեսը պատին արեց ու լաց եղաւ: Ուրեմն այս մարդը զոնէ մէկին կարողացել էր իրեն սիրել տալ:

Ես տարայ նրա թղթերը և ամբողջ օրը ջոկջոկում էի: Նրանցից երեք քառորդ մասը դատարկ, աննշան թղթի կտորտանքներ էին կամ աշակերտական զեղադրութեան վարժութիւնների, բայց Հէնց դրանց մէջ կար մի բաւական Հաստ տետրակ՝ մանր զրոտած և չլվերջացրած. զուցէ ինքը Հեղի-

նակը մի կողմն էր ձգել ու մոռացութեան տուել: Դա Ալէքսանդր Պետրովիչի քաշած տասնամեայ տաժանակիր կեանքի նկարագիրն է, թէև անկապ: Տեղ-տեղ այդ նկարագիրն ընդ-միջվում էր մի ինչ-որ այլ վէպիկով—մի ինչ-որ օտարոտի՝ սարսափելի յիշողութիւններով, անկանոն կերպիւ թղթի անցրած տենդային ցնցումով, կարծես թէ մի ուրիշի ստիպմունքով: Ես մի քանի անգամ կարգացի այդ Հատուածները և զրեթէ Համոզուեցի, որ նոքա գրուած են խելագարութեան ժամանակ: Բայց տաժանակրութեան յիշատակարանը — «Պատկերներ Մեռեալ Տանից» — ինչպէս ինքը մի տեղ ձեռագրում անուանում է այն, բոլորովին Հետաքրքրութիւնից զուրկ չերեաց ինձ: Բոլորովին նոր՝ մինչև օրս անծանօթ աշխարհ, մէկ-մէկ օտարոտի իրողութիւններ, քանի մի Հիանալի յիշատակութիւններ կորած ժողովրդի մասին, այս ամենն ինձ Հրապուրեցին և ես մի քանի տեղեր Հետաքրքրութեամբ կարգացի: Ի հարկէ՝ կարող եմ սխալուել: Փորձի Համար նախ և առաջ ընտրում եմ երկու-երեք գլուխ, թող Հասարակութիւնն ինքը դատի...



Մ Ե Ռ Ե Ա Ն Տ ՈՒՆ

Մեր բանտը ընկած էր ամբողջի ծայրին, հէնց պատնէշի մօտ: Կը պատահէր, ցանկապատի արանքներովը լոյս աշխարհին կրնայէիր, որ չե՞ս տեսնի զէթ մի որ և է բան. և տեսածդ կլինէր միայն երկնքի մի ծայրը, մէկ էլ հողի բարձր պատնէշը՝ վերան խոտեր բուսած, իսկ պատնէշի վըսցով՝ օր ու զիշեր՝ յետ ու առաջ քայլող պահապան զինուորները. ու խելոյն էլ կըմտածէիր՝ թէ կանցնեն տարիներ բոլոր, և դու ճիշտ այսպէս կըգնաս մտիկ կանես ցանկի արանքներովը ու կըտեսնես նոյն պատնէշը, նոյնպիսի պահապան զինուորներ և երկնքի նոյն փոքրիկ ծայրը, ոչ այն երկնքի՝ որ բանտի վերէն է, այլ ուրիշ, հեռաւոր, ազատ երկնքի: Երեւակայեցէք մի մեծ բազ, երկայնքը մօտ երկու հարիւր քայլ և լայնքը՝ հարիւր յիսուն, բոլոր շուրջ պատած՝ անկանոն վեցանկեան ձևի մի բարձր պատուարով, այն է՝ ցանկապատով՝ բարձր սիւներից շինուած, որոնք ուղիղ թաղուած են խոր հողի մէջ, կողքերով պինդ իրար զէմ տուած, խաչաձև տախտակներով ամրացրած և ծայրերը սրած. ահա արտաքին շրջապատը: Շրջապատի մի կողմում շինուած են ամուր մեծ դռներ, միշտ փակ և միշտ օր ու գիշեր պահնորդները պահպանում էին. բաց էին անում ըստ պահանջման, երբ բանդարկեալներին տանում էին բանելու: Այդ դռներից դէնը զալիս էր խնկազին, ազատ-անկախ, աշխարհը, ուր մարդիկ, ապրում էին ինչպէս ամենքն են ապրում: Բայց շրջապատի այս կողմում այդ աշխարհը պատկերացնում էին իբրև մի անիրագործելի առասպել: Այդտեղ կար առանձին աշխարհ, որ ոչ մի բանի չէր նմանում, այստեղ կային իրենց առանձին օրէնքները, իրենց հագուստը,

իրենց բարքերը ու սովորութիւնները և կենդանի—մեռեալ տունը: Կեանքը, ինչպէս ոչ մի տեղ, և մարդիկը առանձին տեսակի: Ահա հէնց այս իսկ առանձին անկիւնը և ես ձեռնարկում եմ նկարագրելու:

Շրջապատի ներսը որ մտնում էք, տեսնում էք այնտեղ մի քանի շէնքեր: Ներսի լայն բազի երկու կողմովը ընկած են գերաններից շինած երկայն մի յարկանի երկու սներ: Դրանք բռնատուններն են: Այդտեղ են կենում կալանաւորները՝ կարգ-կարգ բաժանուած: Յետոյ՝ շրջապատի խորքում՝ էլի մի այդպիսի տուն կայ. դա խոհանոցն է, բաժանուած երկու խմբերի վրայ. այնուհետեւ էլի մի շինուածք, ուր մի ծածքի տակ տեղաւորուած են մառանները, շտեմարանները, պահատուններն: Բազի մէջտեղը դատարկ է ու կազմում է մի հարթ, բաւական մեծ մակարդակ: Այստեղ են շարվում կալանաւորները, որոնց թիւը հաշվում են և իրենց անուններով կանչում առաւօտեան, կէսօրին և երեկոյեան, երբեմն էլ օրը մի քանի անգամ, նայելով թէ պահապան հսկողները որքան կասկածոտ են և որքան համբելու շնորհք ունեն: Շուրջը՝ շինուածքների ու ցանկի արանքում՝ էլի մեծ տեղ է մնում: Այդտեղ՝ շինուածքների ետը՝ բանտարկեալներից ոմանք, որոնք փոքր ինչ աւելի խորշող ու մուսլ բնութեան տէր են, սիրում են շրջել բանելուց ազատ ժամանակ՝ ամենքի աչքերից ծածկուած, և իրենց մտքերի հետ լինել: Պատահելով նրանց այս շրջապալութիւնների ժամանակ՝ ես սիրում էի անդղել նրանց խոժոռ, սոսճած երեսները և դուշակել թէ ի՞նչ են մտածում: Մի աքտորեալ կար, որ ազատ ժամերին սիրում էր ձողերը համբել: Հաղար հինգ հարիւր հատ էին նրանք. և նա բոլորը հաշուած ու նշանակած ունէր: Սովեն մի ձողը նրա համար մի օր էր նշանակում. ամենայն օր մի մի ձող էր անցկենում և այդպիսով մնացեալ չըհաշուած ձողերից կարողանում էր շօշափելի կերպով տեսնել, թէ դեռ էլի քանի՞ օր է մնում, որ բանտումը մնայ մինչև բանելու օրը: Նա հոգով ուրախ էր լինում՝ երբ վերջացնում էր վեցանկեան որևէ կողմը: Դեռ շատ տարիներ նա պէտք է համբերէր: Բայց բանտումը

ժամանակ շատ կար համբերութիւն սովորելու: Մի օր տեսայ՝ ինչպէս ընկերներին մնաս բարեւ էր ասում մի կալանաւոր, որ անցէր կացրել քսան տաժանակիր տարիներ և վերջապէս ազատուել էր: Կային մարդիկ, որ յիշում էին՝ թէ ինչպէս նա առաջին անգամ մտաւ բանտը ջաշէլ, անհող, չէր մտածում ո՛չ իր յանցանքի և ո՛չ էլ պատժի վրայ: Նա այժմ դուրս էր գնում իբր ալեւոր ծերունի, խոժոռ ու վշտահար գէմքով: Նա լուռ ու մունջ պատեց մեր բոլոր վեց բռնատունները: Մտնելով նոցանից իւրաքանչիւրը՝ նա աղօթք էր անում պատկերի առաջ և յետոյ խորը՝ մինչև մէջքը կռանալով՝ դուրս տալիս ընկերներին ու խնդրում՝ որ վատութիւնով չը յիշեն:— Իմ էլ միտքս է, ինչպէս մի օր, մի բանտարկեալի՝ որ առաջ Սիբիրի ունեւոր մի զիւղակիան էր՝ իրիկնադէմին կանչեցին գրտի գուռը: Կէս տարի առաջ նա լուր էր ստացել՝ որ իր կինը մարդի է գնացել, և սաստիկ տխրել էր: Իսկ այժմ ինքը կինը մօտեցաւ բանտին, դուրս կանչեց ու ողորմութիւն տուեց նրան: Նրանք մի երկու ըսպէ խօսեցին, երկուսով էլ փոքր ինչ լաց եղան և ընդ միշտ բաժանուեցին: Ես տեսայ նրա գէմքը՝ երբ բռնատուն էր յետ դառնում... Ճիշտ որ, այստեղ կարելի էր համբերութիւն սովորել:

Մութն որ ընկնում էր, մեզ բոլորիս տանում էին բռնատուն, ուր ամբողջ գիշերը փակում էին: Ինձ համար միշտ ծանր էր գրտից դառնալ բռնատուն: Սա մի երկայն, ցածր ու հեղձուցիչ օդով լի սենեակ էր, աղօտ լուսաւորուած ճրագուի մոմերով՝ իրենց ծանր ու խեղդող հոտով: Ձեմ հասկանում այժմ, ինչպէս ես տասը տարի այնտեղ կացայ: Տախտի վրայ իմը՝ երեք տախտակ էր, այդ էր իմ բոլոր տեղը: Սյդ նոյն տախտի վրայ միայն մեր սենեակում տեղաւորուած էին երեսուն հոգի բազմութիւն: Ձմեռը շուտ էին փակում մեզ պէտք էր չորս ժամ սպասել՝ որ բոլորը քնէին: Իսկ մինչև քնելը—աղմուկ, շշուկ, հռհռոց, ուշուկներ, շղթաների ձայն, ծուխ ու ամխահոտ, սափրած գլուխներ, տաջած երեսներ, ձոթուած շորեր, — ամենայն ինչ՝ անարգուած, խայտա-

ռակուած... ճիշտ որ, զիմացկուն է մարդս: Ամեն բանի սովորող էակ է, և ես կարծում եմ՝ այդ է մարդուս ամենորոշ յատկութիւնը:

Մենք բանտումը ընդամենը երկու հարիւր յիսուն հոգի էինք,—զրեթէ մի անփութիս թիւ: Ոմանք գալիս էին, միւսները ժամանակը լրացնում՝ զնում էին, երրորդները մեռնում էին: Եւ ինչ մարդ ասես չըկար այստեղ: Կարծում եմ՝ Ռուսաստանի ամեն մի նահանգ, ամեն մի կտոր հող այստեղ իւր ներկայացուցիչը կունենար: Սյւլազիք էլ կային, կային մի քանի աքսորեալներ Կովկասի լեռնականներից անգամ: Սոքա ամենքը բաժանվում էին իրենց յանցանքի ծանրութեանը՝ ուրեմն և յանցանքի համար սահմանեալ հասակին նայելով: Պէտք է կարծել, որ չըկար յանցանք՝ որ իւր ներկայացուցիչը չունենար այդտեղ: Բանախ ողջ բնակչութեան զխաւոր հիմքը բազաբացիական կորզի տաժանադիր—աքսորեալներն էին: Դրանք ոճրագործներ էին՝ զրկուած իրենց բոլոր իրաւունքներից, հասարակութիւնից կտրած պատասաններ, տաջած երեսով՝ իբրեւ յաւիտենական վկայ իրենց մեղքութեամբ լինելուն: Նոցա ուղարկում էին այստեղ աշխատելու ութից մինչեւ տասներկու տարի ժամանակով և ապա ցրվում էին՝ իբրեւ զազթականներ՝ Սիբիրի դաւառաւիների այլ և այլ տեղերում:—Կային և զինուորական կարգի ոճրագործներ, որոնք չէին զրկուել իրենց իրաւունքներից, ինչպէս առհասարակ լինում է ռուսաց կալանաւորների զինուորական վաշտերում: Նոցա ուղարկում էին կարճ միջոցով, որից յետոյ յետ էին տանում՝ որանդեց որ եկել էին՝ զինուոր լինելու Սիբիրի կանոնաւոր զուամրաւիներում: Նրանցից շատերը զրեթէ իսկոյն յետ էին դառնում բանաւը՝ կրկնակի ծանր յանցանքներ գործելու համար: Այս կարգը «մշտական» էր կոչվում: Բայց «մշտականները» այնուամենայնիւ դեռ բոլորովին չէին զրկվում ամեն իրաւունքներից: Վերջապէս՝ կային և մի առանձին դասակարգ ամենասարսափելի ոճրագործներ էլ՝ զխաւորապէս զինուորականներից, որոնք բաւական բազմաթիւ էին: Նոքա կոչվում էին

«առանձին բաժանմունք»։ Ամբողջ Ռուսաստանից ոճրագործներ էին ուղարկվում այստեղ։ Դրանք իրենք իրենց մշտական էին համարում և չգիտէին՝ ո՞րքան ժամանակ են աշխատելու։ Օրէնքով նրանց բանտւորական դասերը պէտք էր կրկնապատկել և եռապատկել։ Բանտումը նրանց պահում էին՝ մինչև որ Սիբիրում սկսեն ամենածանր տաժանակիր աշխատութիւնները։ Դուք ժամանակաւոր էք, իսկ մեր առաջին է դեռ երկար ու ձիգ աքսորանքը», ասում էին նրանք միւս բանտարկեալներին։ Վերջը ես լսեցի, որ այս դասակարգը վերացրել են։ Բացի այդ՝ վերացրած է նաև մեր ամրոցի քաղաքական կարգն էլ, և հաստատուած կալանաւորների մի ընդհանուր զինուորական վաշտ։ Ի՛նչ ասել կ'ուզի, սրա հետ միասին փոխուեց իշխանաւորն էլ։ Իմ նկարագրածն, ուրեմն, հին, վաղուց անցած դնացած բաներ են։

Վաղուցուայ բան է՝ ինչ որ պատմելու եմ, և հիմի կարծես երազումն եմ տեսնում բոլորը։ Յիշում եմ՝ թէ ի՛նչ պէս մտայ բանտը։ Իրիկնապահին էր՝ զեկտեմբեր ամսին։ Մութն ընկնում էր արդէն, աշխատանքից յետ էին դալիս, պատրաստվում էին ստուգուելու։ Երկայն բեղերով ենթապան վերջապէս բացարեց այս օտարօտի տան դռները, ուր պէտք է ո՞րքան տարիներ անցկացնէի, ո՞րքան այն տեսակ սպաւորութիւններ դուրս բերէի, որոնց մասին մի մերձաւոր զաղափար էլ չէի կարող ունենալ՝ առանց այդ բոլորը քաշելու իմ անձի վրայ։ Օրինակ, ես իսկի չէի կարող երեակայել՝ թէ ի՛նչ մի սարսափելի ու անտանելի բան է՝ որ իմ տասը տարուայ տաժանակրութեան ժամանակ մի անգամ էլ, մի բոպէ էլ մենակ չըլինեմ։ Աշխատելիս՝ միշտ պահապանը վերեւ կանգնած, տանը՝ երկու հարիւր ընկերներով, և ո՛չ մի անգամ, ո՛չ մի անգամ մենակ չես։ Սակայն, մի՞թէ հէնց այդ էր որ դեռ պէտք է սովորէի։

Կային այստեղ պատահական մարդասպաններ ու արեւետով մարդասպաններ, աւաղախներ ու աւաղակապետներ։ Կային պարզապէս զրպանի դողեր ու վայրաշըջիկներ—ուրիշ փողերով գործ տեսնողներ կամ խուլ ճանապարհներում կողո-

պուտով պարապողներ: Կային այնպիսիներն էլ, որոնց մասին դժուար էր ասել թէ ինչո՞ւ Համար արդեօք կարող էին դալ այստեղ: Եւ սակայն իւրաքանչիւրը իր վէպն ունէր՝ պղտոր ու ծանր, ինչպէս մի զլիաքաւ նախնիքաց օրուայ հարբելուց յետոյ: Ընդհանրապէս իրենց անցրած օրերի վրայ քիչ էին խօսում, չէին սիրում պատմել և կարծես ջանում էին չմտածել նրա վրայ: Ես նրանցից ճանաչում էի նոյն իսկ այնպիսի ուրախ մարդասպանների, այնքան բնաւ միտք չանողների, որ կարելի էր մարջ դալ՝ որ երբեք խիղճը նոցա կշտամբի չէր խփել: Բայց կային և մռայլ դէմքեր, զրեթէ միշտ լռակեաց: Ընդհանրապէս՝ հազիւ թէ մէկը իր կեանքը պատմէր, հետաքրքիր լինելն էլ հօ կարգ չէր, մի-տեսակ՝ սովորութիւն չէր, ընդունուած չէր: Կ'պատահէր մէկ մէկ, որ նոցանից մէկը պարապութիւնից խօսք բաց կանի, իսկ միւսը էլ սառն հոգով ու խոժոռուած կը լսի: Այստեղ ոչ ոք չէր կարող ոչովի վարմացնել: «Մենք կարդալ իմացող մարդիկ ենք», ասում էին նրանք յաճախ մի տեսակ օտարոտի ինքնագոհութեամբ: Միտքս է՝ ինչպէս մի օր, մի աւաղակ, հարբած (տաժանակրութեան մէջ երբեմն կարելի էր հարբել), սկսեց պատմել, թէ ինչպէս նա մորթել է մի հինգամաս տղայի, ինչպէս նրան առաջուց խաբել է խաղալիքով, բաշել տարել է մի տեղ, մի գատարկ համբարանոց ու այնտեղ էլ մորթել է: Ողջ բռնատունը, որ մինչև այժմ ծիծաղում էր նրա կատակների վրայ՝ բղաւեց իբրեւ մի մարդ, և աւաղակը ստիպուած էր լռել: Ոչ թէ զայրոյթից բղաւեց բռնատունը, այլ այնպէս, որովհետեւ պէտք չէր խօսել Դժոխքի մասին, որովհետեւ ընդունուած չէ խօսել Դժոխքի մասին: Ի դէպ նկատեմ, որ այս մարդիկ յիշուի կարդալ իմացողներ էին և մինչև անգամ ոչ փոխաբերական՝ այլ բառացի մտքով: Անշուշտ նրանց կէսից աւելին կարդալ—գրել զիտէին: Ուրիշ ի՞նչ մի այնպիսի տեղում, ուր ռուս ժողովուրդը հաւաքվում է մեծ բազմութիւնով, եթէ զատէք նրանից 250 մարդից մի խումբ, որի կէսը կարդալ իմացող լինի: Յետոյ ես լսեցի, որ մէկը հէնց սրան նման փաստերից սկսեց դուրս բերել, որ զրազիտու-

թիւնը քամբախտացնում է ժողովրդին: Այդ սխալ է. այդտեղ ուրիշ պատճառներ կան, թէ և անկարելի է չըհամաձայնել, որ զրազիտութիւնը ժողովրդի մէջ անձնապատասանութիւն է զարգացնում: Բայց ախր դա ամենեւին թերութիւն չէ:— Բոլոր կարգերը զգեստով էին ջոկնվում իրարից. ոմանց բաձկոնի կէսը մոլթ-կարմրաւուն էր, միւս կէսը՝ մոխրագոյն, ինչպէս և անդրավարտիկի մի ոտը մոխրագոյն, իսկ միւսը՝ մոլթ-կարմրաւուն: Մի անգամ, աշխատանքի վրայ, մի Հացավաճառ-աղջիկ, որ մօտիկ էր եկել կալանաւորներին, երկար դիտում էր ինձ աչքերով և ապա յանկարծ հռհռաց.— «Թո՛ւ, ինչպէս վատ է, կանչեց նա. սե մահուդ էլ չեն ունեցել, մոխրագոյն էլ չեն ունեցել»: Այնպիսիներն էլ կային, որոնց բաձկոնը ամբողջով մոխրագոյն մահուդից էր, բայց միայն թեքերը մոլթ-կարմրաւուն էին: Գլուխները էլ տեսակ տեսակ էին սափրում. ոմանց գլխի կէսը սափրած էր զանգի երկայնքովը, միւսներինը՝ լայնքովը:

Առաջին Հայկացիից կարելի էր այս ամբողջ տարօրինակ ընտանիքում նկատել մի տեսակ խիստ նմանութիւն. ամենից ծայրայեղ, ամենից տարօրինակ անձնաւորութիւններն էլ, որոնք միւսների վրայ ականայ թաղաւորում էին, նրանք էլ ճգնում էին ողջ բանալի ընդհանուր հոսանքին ենթարկուել: Իսկ ընդհանրապէս կ'ասեմ, որ այս մարդիկ՝ մի քանի սակաւ՝ անվերջ ուրախ մարդկանց բացառութեամբ, որոնք այդ պատճառով ամենքի արհամարանքն էին վայելում,—բոլորը տաժան, նախանձոտ, սարսափելի մեծամիտ, պարծենկոտ, դիւրագրգիռ ու վերին աստիճանի ձեւապաշտ մարդիկ էին: Ոչնչի վրայ չըզարմանալու յատկութիւնը ամենամեծ առաքինութիւնն էր: Բոլորի խելքները տարուած էր՝ թէ ինչպէս պէտք է իրանց պահեն: Բայց քիչ չէր պատահում՝ որ ամենադոռող կերպարանքը կայծակի արագութեամբ ամենից երկչոտն էր դառնում: Կային քանի մի ճշմարիտ-ուժեղ մարդիկ. նրանք պարզ էին ու չէին կոտորվում: Բայց զարմանալի բան,—այդ իսկական, այդ ուժեղ մարդկանցից մի քանիսը կային, որ վերջին ծայր՝ գրե-

Թէ ցաւադարութեան չափ՝ ամբարտաւան էին: Առհասարակ սնափառութիւնը, արտաքինը, առաջին տեղն էին բռնում: Մեծամասնութիւնը բարքով լըբացել էր և բարոյապէս սարսափելի ընկել: Բամբասանքն ու վատահամբաւելը անվերջ էին: Դա մի դժուր էր, մի տարտարոս էր: Բայց բանտի ներքին կանոնների և ընդունուած սովորութիւնների դէմ ոչ ոք չէր համարձակվում ապստամբել: Բոլորը հպատակում էին: Լինում էին խիստ աչքի ընկնող բնաւորութիւններ, որոնք դժուարութեամբ, առանձին ջանքով էին հպատակվում, բայց այնուամենայնիւ հպատակվում էին: Բանտն էին գալիս այնպիսիները, որոնք ազատութեան ժամանակ արդէն կապները խիստ էին կտրել, խիստ իրենց չափը չէին ճանաչել, այնպէս որ իրենց յանցանքներն էլ վերջը կասես թէ իրենք չէին գործել, կասես թէ իրենք էլ չէին իմացել՝ ինչո՞ւ էին գործել, կարծես թէ զառանցանքի, արբեցութեան ժամանակն էին գործել, շատ անգամ վերջին աստիճանի գրգռուած սնափառութիւնից: Բայց մեղնում նրանց իսկոյն սանձահարում էին, չընայելով որ ոմանք բանտը զալուց առաջ ողջ զիւղերի ու քաղաքների համար ահ ու սարսափ էին դառցած: Շուրջը նայելով նորեկը շուտով տեսնում էր՝ որ սա այն իր ասած տեղը չէ, որ այստեղ արդէն ոչ ոքի չի զարմացնի և անպատճառ խոնարհում էր ու ընդհանուր հոսանքն ընկնում: Սյդ ընդհանուր հոսանքը արտաքուստ կազմուած էր առանձին տեսակ, սեփական անձնապաշտութիւնից, որով վարակուած էր բանտի զրեթէ ամեն մի ապրողը: Կասես թէ՛ ուղիղ որ՝ տաժանակրի, դատապարտուածի վիճակը մի աստիճան էր, այն էլ պատուաւոր: Ո՛չ մի նշան ամօթի ու զղջման: Բայց և այնպէս՝ երևում էլ էր մի տեսակ արտաքին, այսպէս ասած, պաշտօնական հեղութիւն, մի-տեսակ անվրդով ծամարտակութիւն. «Մենք կորած մարդիկ ենք», ասում էին. «ազատ կեանքի զինը չիմացանք, հիմի դնա՛ ու կանանչ ճիպոտների տակով անցիր և զինուորների շարքերը համրիր», — «Տօրն ու մօրը ականջ չարիր, հիմի թմբկի կաշուին լսիր՝», — «Ոսկի թելով

կար չ'արեցիր, հիմի մուրձով քարեր ջարդիր»։—Այս բոլորը կրկնում էին շուտ-շուտ՝ թէ՛ խրատի և թէ՛ սովորական առածների ու առակների ձևով, բայց ոչ հրեք լըջօրէն։ Այդ բոլորը բառեր էին միայն։ Դժուար թէ նրանցից մէկն էլ ներսից խոստովանուէր իր անօրէնութիւնը։ Ապա թող մէկը՝ ոչ տաժանակիրներից՝ փորցի կալանաւորին երեսովը տալ իր յանցանքը, նախատի նրան (թէ՛, սակայն, ոճրագործին փնտլելը ռուսի մէջ չըկայ),—ուշունցներին վերջ չի լինի։ Իսկ ինչպէ՞ս նրանք բոլորը վարպետ էին ուշունց տալու։ Ուշունց էին տալիս նրանք նուրբ, զեղարուեստօրէն։ Ուշունցը նրանցում զիտութեան բարցրունքին էր հասել, աշխատում էին պիպիլ ոչ այնքան ծանր խօսքով, որքան ծանր խմաստով, ոգով, դաղափարով,—իսկ դա աւելի նուրբ է, աւելի թունաւոր է։ Անվերջ կռիւները նրանց մէջ էլ աւելի առաջ էին տանում նրանցում այս զիտութիւնը։ Այս բոլոր մարդիկ փայտի աշիցն էին բանում, ուրեմն զրանք պարապ էին, ուրեմն՝ և փչանում էին։ Նրանք բոլորը իրենց կամքով չէին հաւաքուել այստեղ, բոլորը իրարու խորթ էին։

«Սատանէն երեք տրեխ է մաշել, մինչև որ մեզ մի տեղ է կիտել» —ասում էին իրանք իրանց վրայ, այս պատճառով զրուպարտանք, որոգայթներ, մանրակրկիտ կանանց բամբասանք, նախանձ, կռիւ, վայրենութիւն, միշտ առաջին տեղն էին բռնում այս զժոխային կեանքում։ Ոչ մի կին-մարդ կարող չէր այնպիսի մանր խժպտանքներով զբաղուել, ինչպէս այս մարդասպաններից ոմանք։ Կրկնում եմ, նրանց մէջ էլ կային ուժեղ մարդիկ, բնաւորութիւններ՝ որոնք սովոր էին իրենց ողջ կեանքում ճնշել ու հրամայել, որոնք կրակի տակ ընկած՝ ան երկիւղի մարդիկ էին։ Նրանց կարծես ակամայ յարգում էին, զրանք էլ իրենց կողմից՝ թէ՛ և յաճախ խիստ նախանձաւոր էին իրենց փառքի համար, բայց ընդհանրապէս աշխատում էին ուրիշների վրայ չըծանրանալ, դատարկ հայհոյանքների չէին մասնակցում, չափազանց արժանապատուութեամբ էին պահում իրանց, խոհեմ և զրեթէ միշտ իշխանութեանը հնազանդ էին,—ոչ թէ հնազանդութեան սկզբունքով, ոչ թէ իրանց պարտաւորութիւնները

ըմբռնելով, այլ այնպէս, կարծես մի որևէ գաշնադրի զօրութեամբ՝ ճանաչելով փոխադարձ շահերը: Բայց և այնպէս, նրանց հետ զգոյշ էլ վարվում էին: Յիշում եմ, թէ ինչպէս այդտեսակ կալանաւորներից մէկին, որ մի անվախ ու վճռական մարդ էր և որ իր զաղանական հակումներով մեծաւորին էլ էր յայտնի, մի ինչ որ յանցանքի համար, կանչեցին մի անգամ որ պատիժ ստանայ: Ամառուայ օր էր, աշխատանքից ազատ ժամանակ: Աւագ-սպան, բանտի մերձաւորագոյն ու անմիջական իշխանաւորը, ինքը եկաւ պահակատուն պատժին ներկայ գտնուելու: Այս մայեօրը մի տեսակ օրհասական էակ էր կալանաւորների համար. նա այն տեղն էր հասցրել նրանց, որ նրանից դողում էին: Անսահման նա խիստ էր, «մարդկանց վրայ էր յարձակվում», ինչպէս ասում էին տաժանակիրները: Ամենից աւելի սարսափում էին նրա սուր, թափանձող հայեացքից, որից անկարելի էր բան թաղցնել: Նա կարծես առանց նայելու էր ատենում: Մանելով բռնա՝ նա արդէն ղիտէր՝ ինչ են անում նրա միւս ծայրում: Կալանաւորները նրան ութ-աչքանի էին կանչում: Նրա բռնած ընթացքը սխալ ընթացք էր: Նա առանց այն էլ կատաղած մարդիկներին միայն կատաղացնում էր իր մոլեգլին, դաժան արարմունքներով և եթէ նրա զլխին չըլկնէր հրամանատարը կանգնած, — մի խոհեմ ու ազնիւ մարդ, որ երբեմն չափ էր դնում նրա վայրենի մոլեգնութիւններին, — մեծ դժբախտութիւններ կը հասցնէր իր կառավարութեամբ: Ձեւ հասկանում ինչպէս նա անվնաս պրծաւ. նա պաշտօնը թողեց ողջ ու առողջ, թէ և պէտք է ասել որ նրան դատի ենթարկեցին:

Կալանաւորը գունաթափուեց՝ երբ նրան կանչեցին: Սովորաբար նա անձայն ու առանց տատանուելու պառկում էր ձիւղոտների տակ, անձայն կրում էր պատիժը և ապա պատժից վեր էր կենում այնպէս, իբրև թէ ոչինչ չի եղել, սառն հոգւով ու փիլիսոփայօրէն նայելով պատահած անյաշողութեան վրայ: Նրա հետ, սակայն, միշտ զգոյշ էին վարվում: Բայց այս անգամ նա իրեն յայտնի չէ թէ ինչու՝ արդար էր համարում: Նա գոյնը գցեց և՛ պահակ ղինուորներից

ծածուկ՝ կարողացաւ թեքը ճիւղել անգլիական սուր կոշկա-
կարի դանակ: Դանակն ու ամեն տեսակ սուր զործիքները
սաստիկ արգելուած էին բանտում: Խուզարկութիւնները լի-
նում էին յաճախակի, անսպասելի և ոչ թեթեւ կերպով, պա-
տիժն էլ անողորմ էր. բայց քանի որ դժուար է զոյի մօտ բան
գտնել՝ եթէ նա առանձնապէս մի բան պահել ուզեցաւ, և
քանի որ դանակներն ու զործիքները բանտումն ամեն ժա-
մանակ կարեւոր էին, ուստի և՛ չընայելով խուզարկութիւն-
ներին՝ նրանց չէր լինում անհետացնել: Իսկ եթէ խլում էին,
իսկոյն էլ նորերն էին բերում: Տաժանակիրները բոլորը թա-
փուեցին դէպի ցանկապատը և սիրաւ տող նայում էին ձողերի
արանքներովը: Բոլորը գիտէին, որ Պետրոսն այս անգամ էլ
չի ուզի ծեծի տակ պառկել և որ մայեօրի վերջն եկել է:
Բայց ամենակարական վայրկենին մեր մայեօրը կառքը նրա-
տեց ու հեռացաւ, յանցնելով մի ուրիշ սպայի որ պատիժը
կատարի: «Ինքն Աստուած փրկեց», տսում էին յետոյ կալա-
նաւորները: Գալով Պետրովին՝ նա հեշտ ու հանդիսաւ քա-
շեց պատիժը: Նրա բարկութիւնը մայեօրի գնացով անց կա-
ցաւ: Կալանաւորը հլու ու հնազանդ է մինչև մի որոշեալ
աստիճան. բայց կայ մի սահման, որից պէտք չէ անցնել: Ի
դէպ՝ չըկայ այնքան հետաքրքրական բան՝ որքան սրանց ան-
համբերութեան ու յամառութեան այս օտարօտի բռնկում-
ները: Յաճախ մարդ մի քանի տարի համբերում է, խոնար-
հում է, ամենախիստ պատիժներ է կրում և մէկ էլ տեսնես
կտրվում է մի փոքրիկ, մի դատարկ բանի վրայ, համարեա
թէ ոչնչի համար: Եթէ այլապէս նայենք, կարելի է մինչև
անգամ խելագար կռել նրան և այդպէս էլ անում են:

Արդէն ասեցի, թէ մի քանի տարիների ընթացքում ես
այս մարդկանց մէջ զղջման մի ամենաթոյլ նշան, մի ամենա-
փոքր տանջող մտածմունք չըտեսայ իրենց ոճրագործութեան
մասին, և թէ նրանց մեծ մասը ի ներքուստ իրենց լիովին
արդար են համարում: Սա իրողութիւն է: Ի հարկէ՝ մեծամտու-
թիւնը, վատ օրինակը, յանդգնութիւնը, կեղծ ամօթը շատ
կողմից այդ իրողութեան պատճառներն են: Բայց միւս կող-

մից՝ ով կարող է ասել թէ Հետազօտել է այս կորած սրտերի խորքերը և կարգացել է այնտեղ ողջ աշխարհից ծածկուած բաները: Բայց ակսր կարելի էր Հօ այնքան տարի զոնէ մի բան նկատել, գտնել, նշմարել այս սրտերում, զոնէ մի նշոյլ, և վկայել նոցա ներքին թախծութեան, տանջանքի մասին: Բայց չըկար այդ բանը, բոլորովին չըկար: Ճիշտ է որ, ոճիրը երևի թէ չի կարող բացատրուել մեր ներկայ պատարաստի տեսակէտներով, նրա փիլիսոփայութիւնը մի փոքր աւելի զժողար է քան կարծում են: Ի Հարկէ, բանտերն ու բռնի աշխատանքների սարքն ու կարգը ոճրագործին չեն ուղղում: Կրանք միայն պատժում են նրան և Հասարակութեանը ապահովացնում չարագործի անկրողոյն ոտնահարութիւններէ: Նրա անդորրութիւնը վրդովելու: Իսկ ոճրագործի սրտում, բանտն ու ամենաստտիկ տաժանակիր աշխատութիւնը զարգացնում են միայն տառելութիւն, արդելուած վայելչութեան ծարաւ և սարսափելի թեթեամտութիւն: Բայց ես Հաստատ Հաւատացած եմ, որ Հոչակաւոր միայնակեցական կրութիւնը միայն կեղծ, խաբուսիկ, արտաքին նպատակին է ծառայում: Նա ծծում, քաշում է մարդուս կենսական Հիւթը, ջլտաւում է նրա Հոգին ու տկարացնում, վախեցնում նրան և ապա բարոյապէս ցամաքած այդ մումիային, այդ կէս-խելաղարին, ներկայացնում է որպէս դարձի և ապաշխարութեան կատարելատիպ: Ի Հարկէ, Հասարակութեան դէմ մարտնչող ոճրագործը աւտում է նրան և գրեթէ միշտ իրեն է արդար Համարում, իսկ նրան մեղաւոր: Բացի այդ՝ նա արդէն Հօ պատիժը ստացել է նրանից, իսկ այդպիսով իրեն գրեթէ Համարում է սրբուած, պարտահատոյց եղած: Կարելի է դատել վերջապէս և այնպիսի տեսակէտներով, որ քիչ կրմնայ արդարացնենք էլ իրեն ոճրագործին: Բայց չընայելով ամեն Հնարաւոր տեսակէտներին, ով ասեա կըՀամաձայնի, որ կան ոճիրներ, որոնք միշտ ու ամեն տեղ՝ ամեն տեսակ օրէնքով աշխարհիս սկզբից անվիճելի ոճիրներ են Համարուել, և կըՀամարուեն այդպէս՝ մինչև որ մարդս մարդ կրմնայ: Միայն բանտումն եմ ես լսել պատմութիւններ ամենաստարաստիկ,

ամենատնքնական արարքների մասին, ամենահրեշտաւոր սպանութիւնների մասին, և այդ բոլորը պատմուած ամենաանզուսպ, ամենուրախ մանկական քրքիջով: Մանաւանդ մտքիցս չի ընկնում մի հայրասպան: Նա աղնուականներին էր, պաշտօն ունէր և իւր վաթսուն տարեկան հօր համար անառակ որդու պէս մի բան էր: Կատարեալ անառակ ընթացքի տէր էր նա, պարտքերի մէջ խրուեց: Հայրը նրան սանձում էր, համոզում էր, բայց հայրը տուն ունէր, ազարակ ունէր, և կասկածում էին թէ փող էլ կունենայ, և ահա որդին սպանեց հօրը՝ աչք դրած լինելով ժառանգութեանը: Ոճիրը յայտնուեց մի ամսից յետոյ: Ինքը սպանողը յայտարարութիւն տուեց ոստիկանութեանը, որ իւր հայրը յայտնի չէ թէ ո՛ւր է կորել: Ամբողջ այդ ամիսը նա ամենացոփ կերպով անցկացրեց: Վերջապէս՝ նրա բացակայութեամբ՝ ոստիկանութիւնը մարմինը դտաւ: Բազի ամբողջ երկայնքովը անցնում էր տախտակներով ծածկուած մի առու անմաքրութիւններն ընդունելու համար: Դիակն ընկած էր այդ առուի մէջ, հաղուած ու խտակած, ալեւոր գլուխը մարմնիցը կտրած ու կրկին իրանին կպցրած, գլխատակին էլ մարդասպանը բարձ էր դրել: Նա չըխօստովանուեց, զըկուեց աղնուականութիւնից, աստիճանից և աքսորուեց աշխատելու քսան տարով: Բոլոր ժամանակը՝ որ ես նրա հետ ապրել եմ՝ նա ամենահրաշալի, ամենաուրախ արամադրութեան մէջ է եղել: Դա մի խենթ ու խելար, թեթեամիտ ու վերին աստիճանի անխոհեմ մարդ էր, թէ և ամենեւին իսկի յիմար չէր: Ես երբէք չեմ նկատել նրանում մի այնպէս առանձին կարծրասրտութիւն, կալանաւորները նրան արհամարհում էին, ոչ թէ իւր յանցանքի համար, որը մտքներովն էլ չէին անցկացնում, այլ իւր գծութեան համար, որ իրան պահել չըզիտէր: Զրոյցների ժամանակ նա երբեմն յիշում էր իւր հօրը: Մի օր նա ինձ հետ խօսելով՝ որ իրենց ընտանիքում առողջ կադմուածքը ժառանգական էր՝ աւելացրեց: «Այ, ի՞նչ քնող է, նա մինչև իր վախճանուելը, ոչ մի ցաւի վրայ չէր զանգատվում»: Սյգուիսի զազանական անզգայութիւն, խօսք չըկայ, անհնա-

րին բան է: Դա մի չքտեսնուած երեւոյթ է այդտեղ կազմուածքի մի թերութիւն, մարմնական և բարոյական մի այլանշանութիւն կայ, որ դեռ անյայտ է դիտութեանը, և ոչ թէ պարզ ոճիր է դա: Ի հարկէ՝ ես չէի հաւատում այդ ոճրագործութեանը: Սակայն նրա քաղաքացի մարդիկ, որոնք պէտք է որ զիտենային նրա պատմութեան բոլոր մանրամասնութիւնները, ինձ պատմում էին նրա բոլոր գործը: Իրողութիւններն այնքան պարզ էին, որ անհնար էր չըհաւատալ:

Կալանաւորները լսել էին՝ թէ ինչպէս նա մի անգամ զիշերը երազումը գոչել էր. «Բռնի՛ր գորան, բռնի՛ր, գլուխը կարի՛ր, գլուխը, գլուխը»...

Գրեթէ բոլոր կալանաւորները զիշերը խօսում էին ու դէլն աալիս: Ուշուցներ, աւաղակի խօսքեր, դանակ, կացին ամենից աւելի էին նրանց բերանը զալիս դէլն տալու ժամանակ: «Մենք ծեծուած մարդիկ ենք, ասում էին նրանք. մեր ներսը ջարդուած է, այդ պատճառով էլ զիշերը գոռում ենք:

Արքունի տաժանակիր աշխատութիւնը ամբողջում ոչ թէ զբաղմունք էր, այլ պարտականութիւն. կալանաւորը աշխատում պրծնում էր իրեն տուած բանը կամ լրացնում էր աշխատանքի օրինաւոր ժամերն ու գնում բանտը: Աշխատանքի վրայ զգուանքով էին նայում: Մարդս՝ առանց իր սեփական առանձին պարապմունքի, որին իր բոլոր խելքով, բոլոր նպասակներով անձնատուր եղած լինի՝ անկարող կըլինէր բանատունն ապրել: Ախր և ի՞նչ հնարքով այս հասունացած, կեանքումը ամեն բան տեսած ու գլխովը անցկացրած և ապրել ուղող բոլոր բաղմութիւնը, բռնի այստեղ խմբուած, հասարակութիւնից և կանոնաւոր կեանքից բռնի պոկուած, կարող էր այստեղ յարմարուիլ, կանոնաւոր ու կարգին ապրել՝ իւր կամքով ու յօժարութեամբ: Միմիայն պարապութիւնից այստեղ նրա մէջ կը զարգանային այնպիսի յանցաւոր յատկութիւններ, որոնց վրայ նա առաջ զազաւար էլ չէր ունեցած լինի: Առանց աշխատանքի ու առանց օրինաւոր սեփականութեան մարդս ապրիլ չի կարող, նա լըբանում

գաղան է դառնում: Եւ այդ պատճառով բանտում ամեն դ՛ բնական պահանջից և մի տեսակ ինքնապահպանութեան զգացմունքից զրգուած՝ իւր արուեստն ու պարապմունքն ունէր: Ամսուուայ երկայն օրը ողջ անց էր կենում արքունական աշխատութեան վրայ. կարճ զիշերն էլ հազիւ քնելու ժամանակ էր լինում: Բայց ձմեռը կալանաւորը մութն ընկնելուն պէս՝ կանոնով՝ պէտք է բանտումը փակուի: Ապա ի՞նչ անէին ձմեռուայ երկար ու տաղտկալի երեկոները: Այդ պատճառով գրեթէ ամեն մի բռնատուն մի մեծ արուեստանոց էր դառնում, չընայելով որ արգելուած էր այդ: Իսկապէս աշխատանքը, պարապմունքը արգելուած չէին. բայց խիստ արգելուած էր մօտները՝ բանտում՝՝ դործիքներ ունենալ, իսկ առանց դրանց աշխատանքն անկարելի էր: Սակայն գողտով աշխատում էին և, երեւում էր, որ իշխանութիւնը մի քանի գիպուածներում շատ էլ ուշադրութեամբ չէր նայում դրա վրայ: Կալանաւորներին շատերը բանտն էին դալիս, առանց բան իմանալու, բայց սովորում էին ուրիշներից և յետոյ արձակվում էին որպէս լաւ արուեստաւորներ: Նրանց մէջ կային և՛ կոշկակարներ, և՛ մաշկակարներ և դերձակներ, և՛ հիւսններ, և կաղապործներ, և փորագրիչներ և ոսկերիչներ: Կար և մի հրէայ, Իսայ Բումշտէյն, ակնագործ՝ նոյն և վաշխառու: Նրանք բոլորն էլ աշխատում էին և մի երկու կոպէկ վատակում: Գործերի պատուէրները քաղաքումն էին ճարում: Փողը դրոշմուած ազատութիւն է, ուստի և ազատութիւնից լիովին զուրկ մարդու համար նա տասնապատիկ թանգ արժի: Եթէ նրա գրպանումը փողը զընդում է, նա կիսով չափ մխլթարուած է, թէև չըկարողանայ էլ մնալ: Բայց փողը միշտ ամեն տեղ կարելի է մնալ, մանաւանդ որ արգելուած պտուղը կրկնակի քաղցր է: Տաժանակրութեան մէջ կարելի էր մինչև անդամ զինի էլ ունենալ: Ծխախոտ խստիւ արգելուած էր, բայց բոլորը ծխում էին նրանով: Փողն ու ծխախոտը փրկում էին բերնի և այլ ցաւերից: Իսկ բանելը փրկում էր ոճիրներից՝ առանց բանելու՝ կալանաւորներն իրար կուտէին՝ ինչպէս սարգերը սրուակում: Չընայելով դրան՝

բանելն էլ, փողն էլ արգելուած էր: Ոչ սակաւ զիշերները յանկարծակի խուզարկութիւններ էին լինում, խլում էին ամեն արգելուած բան և՛ ինչպէս էլ չըթաղցնէին փողը, այնուամենայնիւ երբեմն խուզարկողի ձեռքն էր ընկնում: Ահա թէ մասամբ ինչու չէին խնայում փողը, այլ շուտով կեր ու խումի էին տալիս. ահա թէ ինչու բանտումը զինին էլ էր մոռաք գտել: Ամեն մի խուզարկութիւնից յետոյ, մեղաւորը՝ բացի այն՝ որ զրկվում էր իւր բոլոր կարողութիւնից, սովորաբար լաւ էլ պատժվում էր: Բայց ամեն խուզարկութիւնից յետոյ իսկոյն էլ պակասները լրացնում էին, անյապաղ նոր իրեղէններ էին մէջտեղ դալիս և ամեն բան էլ առաջուան պէս էր գնում: Իշխանութիւնն էլ զիտէր այդ, կալանաւորներն էլ չէին տրանջում պատիժների համար, թէ և այդպիսի կեանքը նման էր Վեյլովի լերան վրայ բնակւողների կեանքին:

Ով որ արհեստ չուներ, ուրիշ կերպով էր վաստակ աւնում: Բաւական օտարոտի հնարքներ կային: Ոմանք վաճառաշահութիւնով, իսկ մէկ-մէկ էլ այնպիսի բաներ էին ծախվում, որ բանտի պատերից դէնը եղողի մաքոմը էլ չէր կարող անցնիլ ոչ միայն գնել կամ ծախել, այլ որ և է մի բանի տեղ դնել: Բայց տաժանակիրները շատ աղքատ էին, սակայն և չափազանց գործեր էին տեսնում: Յետին ցնցոտինը զին ունէր և մի բանի պէտք էր դալիս: Նոյն խեղճութեան պատճառով փողն էլ բոլորովին այլ զին ունէր բանտում, քան թէ դուրսը: Մի մեծ ու բարդ աշխատանք դրօշներով էին վարձատրում: Ոմանք յաջող գործ էին տեսնում վաշխառութեամբ: Փողերը վատնած կամ սնանկացած կալանաւորը տանում էր վաշխառուին տալիս իր վերջին իրերը և նրանից մի քանի պղնձի դրամ ստանում՝ զարհուրելի տոկոսներով: Եթէ նա ժամանակին այդ իրերը չէր աղատի զրաւից՝ անմիջապէս և անխնայօրէն կը ծախուէին, վաշխառութիւնը այն աստիճան ծաղկել էր, որ զրաւ էին դնում մինչև իսկ արքունական ամենօրեայ անհրաժեշտ իրեր. օրինակ՝ արքունի սպիտակեղէն, կոշկակարի իրեղէններ, որոնք ամեն մի կալանաւորի համար ամեն

վայրկեան կարեւոր են: Բայց այգպիսի գրաւների ժամանակ պատահում էր, որ գործը մի ուրիշ՝ սակայն ոչ բոլորովին անսպասելի ընթացք էր ստանում: գրաւ դնողն ու փող ստացողը անյապաղ՝ առանց երկար-բարակ խօսելու՝ գնում էր աւագ ենթասպային՝ բանտի մերձաւորագոյն տեսչին՝ յայտնում ամենօրեայ անհրաժեշտ իրերի գրաւ դնելու մասին, և իսկոյն վաշխառուից յետ էին խլում իրերը՝ առանց մինչև անգամ աւելի բարձր իշխանաւորին իմացում տալու: Նեւաբրքրական է, որ այսպիսի դէպքերում երբեմն կռիւ էլ չէր լինում, — վաշխառուն լուռ ու խոժոռ յետ էր տալիս, ինչ որ պէտքն էր և այն էլ այնպէս՝ որ կարծես ինքը սպասում էր թէ այգպէս կը լինի: Գուցէ նա անկարող էր ինքն իրան չըստատովանուիլ, որ ինքն էլ այգպէս կանէր. եթէ գրաւ դնողի տեղը լինէր: Այդ պատճառով, եթէ յետոյ երբեմն հայհոյում էր՝ առանց մաղձի էր հայհոյում, այնպէս միայն՝ խիզճը մաքրելու համար:

Ընդհանրապէս ամենքը գողութիւններ էին անում միմեանցից զարհուրելի կերպով: Գրեթէ ամեն մարդ իր սրնդուն ունէր կողպէքով՝ արքունի բաները պահելու համար: Այդ թոյլատրւում էր. բայց սնդուկները չէին փրկում: Կարծում եմ, կարելի է երեակայել՝ թէ ի՞նչ տեսակ ճարտար գողեր կային այնտեղ: Ինչնից կալանաւորի մէկը, որ ինձ անկեղծ նուիրուած մարդ էր (ես այս ասում եմ առանց չափազանցութեան), գողացաւ աստուածաշունչս, միակ զիրքը՝ որ թոյլ են տալիս ունենալ սաժանակրութեան ժամանակ: Հէնց նոյն օրը նա ինքը խոստովանուեց ինձ՝ ոչ թէ զղջալով, այլ վերաս խղճալով, որովհետեւ ես երկար փնտռում էի: Կային զինեվաճառներ որոնք զինու առուատուր էին անում և արագ հարստանում էին: Այս առուատուրի վրայ երբ և իցէ առանձին կըխօսեմ. նա բաւական նշանաւոր է: Բանտումը մաքսանենդի համար աքսորեալներ շատ կային, այդ պատճառով իսկի չըպէտք է զարմանալ, թէ ինչպէս այն տեսակ խուզարկութիւններից ու հսկողներից յետոյ, էլի զինի էին բերում բանտը: Ի դէպ՝ մաքսանենդը խուր բնութիւնով մի

տեսակ առանձին յանձանք է: Կարելի՞ է արդեօք երեակայել, օրինակ, որ փողը, շահը մի այլ մաքսանենդ գողն աչքում երկրորդական գեր է խաղում, երկրորդ տեղն է բռնում: Բայց արի տես որ հէնց այդպէս էլ լինում է: Մաքսանենդիչը ղգացմունքով, կոչումով է գործում: Դա մասամբ մի բանաստեղծ է: Ամեն բան վտանգի է ենթարկում, սարսափելի վտանգի առաջն է դնում, սատանութիւններ է անում, հնար գտնում, դուրս պրծնում: Երբեմն էլ դործում է մի տեսակ ողևորութեամբ: Դա մի նոյնքան զօրեղ մոլութիւն է, որ բան թղթախաղը: Ես բանտում ճանաչում էի մի կալանաւոր, արտաքուստ հսկայական մեծութեամբ՝ բայց այնքան հեղ, հանդարտ ու խոնարհ, որ չէր կարելի երեակայել ինչպէս նա բանտն եկաւ ընկաւ: Նա այնքան բարեհոգի ու խաղաղասէր էր, որ բանտում եղած իր բոլոր ժամանակը ոչ ոքի հետ կռիւ չարեց: Բայց նա արեւմտեան սահմանիցն էր, ընկել էր մաքսանենդութեան համար, և ի հարկէ այստեղ էլ չքարոզացաւ դիմանալ ու սկսեց գինի անցկացնել: Քանի անգամ նրան պատժել էին դրա համար և ի՞նչպէս նա վախենում էր ծեծից: Գինի անցկացնելն էլ հօ ամենաչնչին շահ էր տալիս նրան: Գինուց հարստանում էր միմիայն դինու մենավաճառը: Այդ խենթը արուեստը իբրեւ արուեստ էր սիրում: Նա կնկայ պէս լացկան էր, և պատահել է, քանի անգամ պատժուելուց յետոյ, երգում-կրակ է կերել որ էլ գինի չի բերի: Արիութեամբ նա իրեն յաղթահարում էր մի ամբողջ ամիս, բայց էլի՝ վերջապէս՝ չէր դիմանում... Այդ անձանց շնորհիւ՝ բանտում գինին չէր պակասում...

Վերջապէս՝ մի ուրիշ հասոյթ էլ կար, որ թէև չէր հարստացնում կալանաւորներին, բայց մշտական էր ու շահաւէտ: Դա ողորմութիւնն է: Մեր հասարակութեան բարձր դասը զաղափար անգամ չունի թէ ի՞նչպէս են հոգում «թըշուռները» մասին վաճառականները, քաղաքի միջին և ստորին դասակարգը և մեր բոլոր ժողովուրդը: Ողորմութիւնը լինում է գրեթէ անընդհատ և գրեթէ միշտ էլ հացով, բոբոնով, աւելի սակաւ դրամով: Առանց այս ողորմութիւնների,

շատ տեղերում կալանաւորները՝ մանաւանդ դատի ենթարկուած կալանաւորների, որոնք դատապարտուածներէջ շատ աւելի խիստ են պահվում—բանը շատ աւելի վատ կը լինէր։ Ողորմութիւնը կալանաւորները իրար մէջ բարեպաշտութեամբ հաւասար բաժանում էին։ Եթէ ամենին չէ բաւում, բոքոնները հաւասար կէս են անուա, երբեմն էլ վեց մաս անում, և ամեն մի բանտարկեալ անպատճառ իւր կտորն է ստանում։ Յիշում եմ՝ ինչպէս ես առաջին անգամ դրամով ողորմութիւն ստացայ։ Իմ բանտը մտնելուս հէնց սկզբներում էր սյգ։ Ես առաւօտուայ աշխատանքից միայնակ վերադառնում էի պահապան ղինուորի հետ։ Հանդէպիցս դալով անցկացան մայր ու աղջիկ, աղջիկը տասը տարեկանի չափ, սիրունիկ, ինչպէս հրեշտակ։ Ես նրանց արդէն տեսել էի մի անգամ։ Մայրը ղինուորի կին էր, այրիացած։ Նրա ամուսինը, ջահել ղինուոր, դատի էր մասնուած և մեռաւ հիւանդանոցի կալանաւորների բաժնում այն ժամանակ, երբ ես էլ այնտեղ հիւանդ պառկած էի։ Կինն ու աղջիկը դալիս էին նրան վերջին բարեք տալու, երկուսն էլ սարսափելի լաց էին լինում։ Աղջիկը որ ինձ տեսաւ կարմրեց՝ մօրը մի բան շնջաց. նա էլ իսկոյն կանգ առաւ, զրպանում մի քառորդ կոպէկանոց գտաւ և տուեց աղջկանը։ Սա էլ դուխ առաւ ու վաղտուեց ետեւիցս...—Ա՛ռ, «թշուառ», վերցրու այս, ի սէր Աստուծոյ, կանչում էր՝ վազեվազ առաջս ընկնելով և փողը ձեռքս մտցնելով։ Ես վերցրի նրա կոպէկը, և աղջիկը դարցաւ մօր մօտ բոլորովին գոհունակ։ Սյս կոպէկը երկար ժամանակ պահում էի մօտս։



Բ.

ԱՌԱՋԻՆ

ՏՊԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐՍ

Բանտարկութեանս կեանքի առաջին ամիսը և ընդհանրապէս սկիզբը վառ պատկերանում է այժմ երեակայութեանս առաջ: Բանտարկութեանս հետեւեալ տարիներն աւելի աղօտ են շողում յիշողութեանս մէջ: Կան որ բոլորովին ջնջուել են կարծես, միախառնուել իրար, թողնելով իրանցից յետոյ մի ամբողջ տպաւորութիւն՝ ծանր, միօրինակ, հեղձուցիչ տպաւորութիւն:

Բայց ինչ որ տաժանակրութեանս առաջին տարիներումն եմ քաշել՝ ինձ թվում է թէ կարծես երեկ է պատահել: Եւ այդպէս էլ պէտք է լինի:

Պարզ յիշում եմ, որ այս կեանքում առաջին քայլափոխից ինձ զարմացրեց այն, որ ես կարծես այնտեղ մի այնպէս զարմանալի, արտասովոր կամ, լաւ ևս, անսպասելի բան չըզտայ: Սյս ամենը կարծես առաջ էլ ցոլում էր երեակայութեանս մէջ, երբ ես Սիրիւր գնալով աշխատում էի առաջուց վիճակս զուշակել: Բայց շուտով ամենաօտարօտի անակրնկալ բաների, ամենահրէշաւոր իրողութիւնների մի անդունդ սկսեց ինձ կանգ առնել տալ զրեթէ իւրաքանչիւր քայլափոխիս: Եւ արդէն վերջը միայն, արդէն բաւական երկար ապրելուց յետոյ բանտում՝ ես լիովին ըմբռնեցի այդպիսի գոյութեան բացառիկութիւնն ու անակնկալութիւնը ամբողջապէս, և աւելի ու աւելի զարմանում էի վերան: Խոստովանվում եմ, որ այս զարմացքը տաժանակրութեան երկար ժամանակն ամբողջապէս հետս եմ տարել՝ երբէք չեմ կարողացել հաշտուիլ այդ տաժանակրութեան հետ:

Առաջին տպաւորութիւնս՝ բանտը մոնելիս՝ ընդհանրապէս ամենազգուշիկն էր. սակայն չընայելով դրան, — զարմանալի բան է, — ինձ երեւաց, որ բանտումն աւելի թեթեւ է կեանքը, քան թէ ես երեւակայում էի ճանապարհին: Կալանաւորները՝ թէեւ շղթայած՝ բայց ազատ ման էին դալիս ամբողջ բանտումը, յիշոցներ էին տալիս, երգեր երգում, իրենց համար աշխատում, ծխափող ծխում, մինչև անգամ գինի խմում (թէև շատ քչերը), իսկ զիշերները ոմանք էլ թղթախաղ էին սարքում: Նոյն իսկ աշխատանքն, օրինակ, բոլորովին այնպէս ծանր, պաշտօնակէ, չեւեաց ինձ, և միայն բաւական երկար ժամանակ յետոյ ես գլխի ընկայ, որ այդ աշխատութեան ծանրութիւնն ու պաշտօնակէն ոչ այնքան դժուարութիւնն է ու անընդհատ շարունակութիւնն, որքան այն՝ որ նա պիտոյաւան է, պարտաւորեալ է, ծեծի երկիւղով: Գիւղացին աղատութեան մէջ դուցէ և անհամեմատ աւելի է աշխատում, երբեմն էլ զիշերներով անգամ, մանաւանդ ամառը. բայց նա իր համար է աշխատում, աշխատում է մի բանաւոր նպատակով, և նրա բանը անհամեմատ աւելի թեթեւ է, քան թէ տաժանակրկնը, որ բռնի է և նրա համար բոլորովին անօգուտ աշխատութիւն: Մի անգամ մտքովս անց կացաւ, որ եթէ ուղէին մարդուս ջախջախել, ոչնչացնել, նրան պատժել ամենազարհուրելի պատժով, այնպէս որ ամենասարսափելի մարդասպանը սոսկար ու առաջուց վախենար այդ պատժից, — հարկաւոր կը լինէր միայն աշխատանքը դարձնել կատարեալ՝ լիովին անօգուտ և անխմստ բնաւորութիւն ունեցող մի բան: Եթէ պիտեան տաժանակիր աշխատութիւնը և՛ անհետաքրքրական և՛ տաղտկալի է տաժանակիր մարդու համար, այնուամենայնիւ նա ինքն ըստ ինքեան, իբրեւ աշխատութիւն, խելացի աշխատութիւն է. կալանաւորը շինում է աղիւս, փորում է գետին, ծեփում է, կառուցանում է. այդ աշխատութեան մէջ իմաստ ու նպատակ կայ: Տաժանակիր բանուորը երբեմն էլ յափշտակվում է այդ աշխատութեամբ, ուղղում է աւելի ճարպիկ, աւելի օգտաւէտ, աւելի լաւ կերպով բան շինել: Բայց եթէ սափաւեն

նրան, օրինակ, ջուրը դատարկել մի ամանից միւսը, իսկ սրանից էլ առաջինի մէջ թափել, աւազ մանրել, հողի կոյտը քաշ տալ մի տեղից միւսը և ընդհակառակը,—եւ կարծում եմ կալանաւորը մի բանի օրից յետոյ կը զարմանար և հաղարաւոր ոճիրներ կը գործէր՝ որ գոնէ մեռնի ու այդ ստորութիւնից, ամօթից և տանջանքից ազատուի: Հասկանալի է՝ որ այդպիսի պատիժը չարչարանք, վեհօրհնութիւն կը դառնար, և բոլորովին անխորհուրդ կը լինէր, որովհետեւ ոչ մի բանաւոր նպատակի չէր հասնելու: Բայց որովհետեւ այդպիսի չարչարանքներից, անխորհուրդ բանից, ստորութիւնից ու ամօթից մի մասը անշուշտ գոյութիւն ունի նաեւ ամենայն բռնի աշխատութեան մէջ, այդ պատճառով էլ տաժանակիր աշխատութիւնը անհամեմատ աւելի դառն է ամենայն ազատ աշխատութիւնից, հէնց նրանով, որ նա բռնի աշխատութիւն է:

Եւ, սակայն, ձմեռը՝ դեկտեմբեր ամսին՝ բանտը մոտայ, և դեռ գաղափար չունէի ամառուայ՝ հնգապատիկ աւելի ծանր՝ աշխատանքի մասին: Իսկ ձմեռը մեր ամբողջում արքունի աշխատանքներն առհասարակ քիչ էին: Կալանաւորները գնում էին Իրաիշ արքունական հին նաւերը բաղելու, աշխատում էին արուեստանոցներում, արքունի շէնքերից բերում էին բուբից բերած ձիւնը, այրում ու մանրում էին ալէբաստր, և այլն, և այլն: Զմեռուայ օրը կարճ էր, աշխատանքը շուտ էր վերջանում և մեր մարդիկը շուտ էին վերադառնում բանտը, ուր նրանք ոչինչ գործ չէին ունենում, եթէ սեփական որեւէ աշխատութիւն չէր պատահում: Բայց սեփական գործով պարապում էր կալանաւորների գոցէ միայն երրորդ մասը, իսկ միւսները պարապ-սարապ քաշ էին գալիս ի զուր տեղը բանտի բոլոր բռնատուններում, յիշողներ տալիս, իրարու մէջ որոգայթներ, խաղեր էին սարքում, հարբում էին, եթէ դէթ մի փոքր փող էր ընկնում ձեռքները, դիշերները թղթախաղով տարվում էին վերջին շապիկը և այս ամենը անձկութիւնից, պարապութիւնից, բան չը շինելուց: Վերջը եւ հասկացայ, որ բացի ազատութիւնից զոկելը, բա-

ցի բռնի աշխատութիւնը՝ տաժանակիր կեանքում մի տան-
ջանք էլ կայ՝ գուցէ ամենազօրեղը՝ քան միւս բոլոր տան-
ջանքները: Այդ բռնի ընդհանուր կենսակոչումն է: Ընդհա-
նուր կենսակոչութիւն, ի հարկէ, ուրիշ տեղերումն էլ կայ,
բայց բանտն էլ այնպիսի մարդիկ են գալիս, որ ամեն մարդ
չէր ուզել նրանց հետ ապրել, և ես հաւատացած եմ՝ որ ամե-
նայն տաժանակիր մարդ զգացել է այդ տանջանքը, թէ՛ ի
հարկէ՝ մեծ մասամբ անգիտակցօրէն:

Այսպէս էլ կերակուրն ինձ բաւական զոհացուցիչ երեւոյ:
Կալանաւորները հաւատացնում էին, որ այդպէս կերակուր
չըկայ Եւրոպական Ռուսաստանի կալանաւորների վաշտերում:
Դրա մասին չեմ ուզում դատել, որովհետեւ ես այնտեղ չեմ
եղել: Առանց այն էլ շատերը կարող էին սեփական կերա-
կուր ունենալ: Տաւարի միսն արժէր մեղնում զրուանքան եր-
կու կոպէկ, ամառը՝ երեք կոպէկ: Բայց սեփական կերակուր
էին ունենում միայն նրանք, որոնց ձեռքում շարունակ փող
էր լինում, իսկ տաժանակիրների մեծ մասը արքունի կերա-
կուրիցն էր ուտում: Սակայն կալանաւորները իրենց կերա-
կուրով պարծենալով՝ միայն հացի մասին էին ասում և իս-
կապէս օրհնում էին այն՝ որ մեր հացը հասարակաց է և ոչ
թէ կշռով են տալիս: Այս վերջին բանը նրանց զարհուրեց-
նում էր. եթէ կշռով տային՝ մարդկանց երրորդ մասը քաղ-
ցած կը լինէր, իսկ ընկերովի ամենքին էլ հասնում էր: Մեր
հացը մի առանձին տեսակ համով հաց էր և դրանով ողջ քա-
ղաքում յայտնի էր: Այդ բանը վերագրում էին բանտի փուռ-
ների մի առանձին շինուածքին: Իսկ չէին շատ լաւ էլ չէր:
Եփում էին մի ընդհանուր պղնձում, մի քիչ կորկոտ էին
ձգում համ տալու համար և մանաւանդ լի օրերը՝ դարտակ
ջուր էր: Ինձ զարհուրեցրին նրա միջի ահաղին քանակու-
թեամբ բլրջները, իսկ կալանաւորները սրա վրայ ոչ մի ու-
շադրութիւն չէին դարձնում:

Առաջին երեք օրը ես աշխատանքի չէի դնում. այդպէս
էին վարվում նաեւ ամեն մի նորեկի հետ, — թողնում էին որ
ճանապարհից հանգստանայ: Բայց հէնց երկրորդ օրը ես

պէտք է բանալից դուրս գայի, որ ինձ շղթայէին: Իմ կապանքները անձեւաւոր, օղակաւոր, «բարակ ձայնով» էին, ինչպէս ասում էին կալանաւորները: Նրանց դրսիցն էին կրում: Իսկ բանալի ձեւաւոր կապանքները, որոնք աշխատութեանն էին յարմարեցրած, ոչ թէ օղակներից էին բաղկացած, այլ չորս երկաթէ ձողերից՝ զրեթէ մի մի մատի հաստութեամբ, որոնք իրար միացրած էին երեք օղակներով: Նրանց անդրավարտիկի տակից պէտք էր կրել: Մէջտեղի օղակից մի փոկ էին կապում, իսկ սա էլ իւր հերթին պնդացնում էին ուղղակի շապկի վրայ կապած գօտկափոկին:

Յիշում եմ բռնատան մէջ առաջին առաւօտս: Պահականոցում բանալի մեծ դռների մօտ թմբուկը Զէֆը խփեց և տասը ըոպէ անց՝ պահնորդ ենթասպան սկսեց բռնատունները բաց անել: Սկսեցին զարթնել: Մի՛ վեցերորդ դրուանքանոց ճրագուի մոմի աղօտ լուսով կալանաւորները՝ ցրտից դողալով՝ տախտից վեր էին կենում: Մեծ մասը լուռ ու թթուած էին քնից: Նրանք յօրանջում, ճմլոտում էին և իրենց դաջած ճակատները կնճռոտում: Ոմանք երեսին խաչ էին հանում, իսկ միւսները արգէն սկսել էին իրար հայհոյել: Սարսափելի ծանր էր օդը: Զմեռուայ թարմ օդը դռնովը ներս պրծաւ՝ հէնց որ բաց արին, և փաթիլ-փաթիլ գոլորշու նման տարածուեց բռնատանը: Տակառներով լի ջրերի մօտ կիտուեցին կալանաւորները. նրանք հերթով վերցնում էին շերեփը, բերանը ջուր առնում և բերանից ձեռներն ու երեսը լուանում: Զուրը իրիկուանից պատրաստում էր աղբ թափողը: Ամեն մի բռնատանը կանոնով մի կալանաւոր կար՝ ընկերութիւնից ընտրուած՝ բռնատանը ծառայելու համար: Նա աղբ թափող էր կոչվում և աշխատանքի չէր գնում: Նրա գործըն էր բռնատանը մտքորութիւն պահպանել, տախտն ու յատակը աւել ու քերել, զիշերուայ ծափը տուն բերել ու դուրս տանել և երկու տակառ նոր ջուր բերել—առաւօտը՝ լուացուելու, իսկ ցերեկը՝ խմելու համար: Շերեփի խաթեր, որ մի հատ էր, անմիջապէս սկսել էին կռիւները.

— Ուր ես խցկվում, պռակերես, մռմռում էր մի թթուած,

բարձրահասակ կալանաւոր՝ նիհար ու թխադէմ, ինչ որ մի տարօրինակ ուռուցքներով սափրած գանգի վրայ,—հրելով մի ուրիշ հաստ ու կարճահասակ կալանաւորի՝ ուրախ ու կարմիր երեսով,—կայ.

—Ի՛նչ ես գոռում: Կենալու համար մեզնում փող են տալիս. ինքդ կորի՛ գնաւ. Արձանի պէս էլ ձգուել է: Այսինքր, տղերք, հէնց կարծես նա իսկի զրաբարների հետ նստած կանգնած չլլինի:

«Գրաբարները» իր ներգործութիւնն ունեցաւ,—շատերը ծիծաղեցին: Նէնց այդ էլ պէտք էր ուրախ հաստափորին, որ բռնատանը, ինչպէս երեւում է, մի տեսակ կամաւոր խեղկատակ էր: Բարձրահասակ կալանաւորը նրա վրայ նայեց ամենախորին արհամարհանքով:

—Դարմանակեր կով, արտասանեց նա կարծես ինքն իրեն. —տես թէ ո՛նց է հաստացել բանտի իստակ հացը ուտելով: Ուրախ է՝ որ պաս-բացին տասներկու խողի ձաղեր ձեռք կրճդի:

—Ախր դու ի՞նչացու ես, ի՞նչ մի թռչուն ես, գոռաց նա յանկարծ կարմրատակելով:

—Բանն էլ հէնց այն է, որ թռչուն եմ:

—Ի՞նչ տեսակ:

—Այն տեսակ:

—Ի՞նչպէս այն տեսակ:

—Դէ մի խօսքով այն տեսակ էլի:

—Ախր ի՞նչ տեսակ:

Երկուսով էլ աչքերն իրար վրայ տնկեցին: Հասալիկը պատասխանի էր սպասում և բռունցքները սեղմել էր, կարծես իսկոյն էլ ուզում էր կռուի մէջ ընկնել: Ես էլ ուղիղ կարծում էի, որ կռիւ կըլլինի: Ինձ համար այս ամենը նոր էր և ես հետաքրքրութեամբ էի նայում: Բայց վերջն իմացայ, որ բոլոր դրա նման տեսարանները չափազանց անմեղ էին և խաղում էին՝ իբրեւ կատակերգութիւն՝ ընդհանուրի ղուարճութեան համար. իսկ կռուի երբէք չէր հասնում բանը: Այս ամենը բաւական բնանիշ էր և պատկերացնում էր բանտի բարքերը:

Բարձրահասակ կալանաւորը հանգիստ ու հպարտ կանգնած էր: Զգում էր որ իր վրայ նայում են ու սպասում՝ թէ ինքն իր պատասխանով կըխայտառակուի թէ ոչ որ պէտք էր ինքն իրան պաշտպանէր, ապացուցանէր, որ իրօք նա թռչուն է և ցոյց տար, թէ ինչպիսի թռչուն է իսկապէս: Անասելի արհամարանքով նա աչքերը չռեց իւր հակառակորդի վրայ, աշխատելով՝ աւելի վերաւորելու համար՝ մի տեսակ ուսի վրայովը նայել նրան ոտից դուրս. կարծես նրան մօեղի պէս էր զննում, և դանդաղ ու պարզ արտասանեց.

— Թաւառ.

Սյսինքն թէ նա թառլան թռչունն է: Կալանաւորի հնարադիտութիւնը ողջունուեց հռհռոցի մի բարձր ծայթիւնով:

— Դու լիբ ես, և ոչ թէ թառլան, մոնչաց հաստիկը՝ զգալով որ բոլոր կէտերում կտրուեց, և վերջին ծայր կատաղութեանը հասաւ:

Բայց հէնց որ կռիւը լուրջ դարձաւ, կռուողերին իսկոյն շրջապատեցին:

— Ի՛նչ էլ զալմադալ արեցիք, զոռաց նրանց վրայ ողջ բռնատունը:

— Դուք լաւ կանէք իրար կպէք՝ քան թէ բողաղ էք պատռում, ձայն տուեց մի մարդ անկիւնից:

— Ի՛նչպէս չէ, կը կռուեն, պատասխան եկաւ:— Մեր մարդիկը աշխոյժ, կռուասէր են. եօթս միասին մէկից չենք վախենում...

— Երկուսն էլ լաւ են, է՛: Մէկը մի գրուանքայ հացի համար բանտն եկաւ, միւսը՝ կճուճի սիրահար, զիւղացու կնոջ մածուէնը կերաւ, ճիւղոտի համը առաւ:

— Դէ, դէ, դէ: Ներիք է, ձայն տուեց ծեր զինուորը, որ կարգապահութեան համար բռնատանն էր կենում և այդ պատճառով քնում էր անկիւնումը առանձին թախտի վրայ:

— Տղէրք, ջո՛ւր. նեվալիդ Պետրովիչը զարթնեց, նեվալիդ Պետրովիչին, մեր հարազատ եղբօրը, բարի լոյս:

— Եղբայր... Ես ի՛նչ քո եղբայրն եմ: Իրար հետ մի մա-

նէթի բան էլ չենք խմել, և եղբայր ենք, փնթփնթում էր ծեր զինուորը՝ վերարկուն թեքերն անցկացնելով:

Պատրաստվում էին ստուգուելու սկսեց լուսանալ. խոհանոցում հաւաքուել էր խուռն ամբոխ բազմութիւնը, ճեղքել չէր լինի: Կալանաւորները իրանց կիսաքուրքերով ու երկուսի կիսած գլխարկներով խռնուել էին հացի մօտ, որ կրտում էր նրանց համար կերակուր եփողներէջ մինը: Կերակուր եփողներն ընտրվում էին ընկերութիւնից, ամեն մի խոհանոցում երկու երկու: Նրանց մօտ էլ պահվում էր և հաց ու միս կտրտելու խոհանոցի գանակը, որ մի հատ էր ամբողջ խոհանոցի համար:

Բոլոր անկիւններում և սեղանների շուրջը տեղաւորուել էին կալանաւորները՝ գլխարկներով, կիսամուշտակները հագնելին և զօտիները կապած՝ պատրաստ խկոյն և եթ աշխատանքի դնալու: Ոմանց առաջ դրած էին թթուաջրով փայտէ գաւաթներ: Հացը բրդում էին թթուաջրում և խպշտում: Անտանելի աղմուկ ու շուկ էր. բայց ոմանք հանգարտ ու խելօք զրոյց էին անում անկիւններում:

— Ծերուկ Անտոնիչի կերածն անուշ, բարեւ. արտասանեց մի մատաղահաս կալանաւոր՝ նստելով ունքերը կիտած ու ատամը թափած մի կալանաւորի կողքին:

— Դէ բարեւ, թէ որ հանաք չեմ անում, ասաց նա առանց աչքերը բարձրացնելու և աշխատելով հացը ծամել իր անատամ լնդերքով:

— Բա՛, ես կարծում էի, Անտոնիչ, որ դու մեռել ես, հաւատա՛հը:

— Ձէ՛, առաջ դու մեռիր՝ յետոյ ես...

Ես նստեցի նոյա կողքին: Իմ աջ կողմում խօսակցում էին երկու լուրջ կալանաւորներ՝ ըստ երեւոյթին աշխատելով միմեանց առաջ իրենց ծանրութիւնը պահպանել:

— Չըյուսաս թէ ինձնից զողանան, ասում էր մէկը, — ես, ախպէր, ինքս վախենում եմ՝ որ բան չըզողանամ:

— Դէ ինձ էլ թող, մերկ ձեռներով չըզիպէս՝ կայրեմ:

— Ի՜նչ պիտի պրեա, մի դող աւաղակ էլ դու ես, մենք ուրիշ անուն էլ չունենք... այն կնիկը քեզ կը կողոպտի, յետոյ բարեւ էլ չի տայ: Իմ կոպէկն էլ ակսպէր ջուրը քցելի: Օրերս նա ինքն եկաւ: Ո՞ր ծակը մտնէինք ես ու նա: Սկսեցի խնդրել դահլիճ Ֆեդկային, արուարձանումը նա դեռ տուն ունէր, ջհուդ քոսոտ-Մողմոնիցն էր առել, այ այն, որ յետոյ ինքն իրան թողով խեղդեց:

— Գիտեմ: Նա երեք տարի էր որ մեր միկիտանէն էր, աւելի անունն էր՝ մովթը գինետուն Գրիշկա: Գիտեմ:

— Այ, չես իմանում, այդ ուրիշ գինետուն է:

— Ո՞նց չէ, ուրիշն է: Իբր թէ դու շատ գիտես: Ես քեզ այնքան վկաներ բերեմ որ...

— Կըքե՛րես: Ո՞րտեղացի ես, բա ես ո՞վ եմ:

— Ո՞վ ես: Այ հէնց ես քեզ ծեծել եմ, բայց չեմ պարծենում, և դեռ ասում է թէ ո՞վ եմ:

— Դու ծեծե՛լ ես: Ինչ ծեծողը դեռ ևս չի ծնուել, իսկ ով ծեծել է՝ նա հողումն է պառկած:

— Այ դու Բենդերի ժանտախտ:

— Այ դու Սիբիրի խոցովը խոցոտուես:

— Այ դու թուրքի թրովը մեռնես...

Եւ յիշոցները թափուեցին:

— Դէ՛, դէ՛, դէ՛ ի՜նչ էք զայմաղալ անում, ձայն տուեցին չորս կողմից:— Դուքսն ապրել չըկարողացան, հիմի ուրախ են որ իստակ հացի արժանացան...

Իսկոյն էլ կըհանգստացնէին: Յիշոցներ տալ, լեզուով «թակել», թոյլ էին տալիս: Դա, մասամբ, բոլորի համար էլ զուարճալիք էր: Բայց տուր ու ծեծի միշտ չէին թողնի, և այն էլ՝ բացառիկ դիպուածում միայն կը ծեծկուէին: Տուր ու ծեծը մայիօրին իմաց կըտային, կըսկսուէին խոյզ ու խընդիրներ, ինքը մայիօրը կըդար, — մի խօսքով ամենքի բանն էլ լաւ չէր լինի, այդ պատճառով է որ ծեծի չէին թողնում: Եւ հէնց ոսոխներն էլ յիշոց են տալիս աւելի իբրեւ զուարճալիք, իբրեւ վարժութիւն ոճի կողմից: Քիչ չէ պատահում որ իրանք իրանց խաբում են, սկսում են սարսափելի տեն-

դով, կատաղութեամբ... մտածում ես՝ որտեղ որ է իրար վրայ կրպործենե. ամենեւին ոչ կըհասնէին մի որ և է կէտի և խկոյն իրարից կըջոկնուէին: Սյս ամենը սկզբում ինձ շատ էր զարմացնում: Ես դիտամբ այստեղ օրինակ բերի տաժանակրութեան ամենասովորական խօսակցութիւններից: Սկզբում ես երեակայել չէի կարողանում՝ թէ ի՞նչպէս կարելի է զուարճութիւնից ուշուց տալ, այդ բանում զբօսանք, դուրեկան վարժութիւն, հաճոյք տեսնել: Սակայն չբացատրեցի է մոռանալ և սնտփառութիւնը: Ճարտարաբան հայհոյելը յարգանք էր վայելում: Քիչ էր մնում նրան ծափահարէին՝ ինչպէս դերասանի:

Դեռ երեկ իրիկուանից նկատեցի, որ վերաս խէթ-խէթ են նայում:

Արդէն մի քանի խոժոռ հայեացքներ յափշտակեցի: Ընդհակառակը՝ ուրիշ կալանաւորներ շուրջս պտտում էին՝ կասկածելով որ հետս փող բերած կը լինիմ: Նոքա խկոյն սկսեցին ծառայութիւն ցոյց տալ. սկսեցին սովորեցնել՝ ինչպէս կրեմ նոր կապանքս. ճարեցին ինձ համար, ի հարկէ փողով մի սնդուկ կողպէքով, որ մէջը պահեմ արդէն ինձ տուած արքունական իրեղէնը և մի քանի հատ ճերմակեղէնս՝ որ հետս բանտն էի բերել: չէնց միւս օրը նրանք ճերմակեղէնս զողացան ու դինու տուին խմեցին: Նրանցից մինը վերջը իմ ամենանուիրուած մարդը դարձաւ, թէ և ամենայն յարմար դիպուածում չէր դադարում ինձ կողոպտելուց: Նա այս անում էր առանց քաշուելու, գրեթէ անգիտակցօրէն, կարծես պարտականութեան թելադրութեամբ, և նրա վրայ անկարելի էր բարկանալ:

Ի միջի այլոց նրանք ինձ սովորեցրին, որ պէտք է սեփական թէյ ունենալ, որ վատ չի լինի թէյաման էլ ճարել, իսկ առ ժամանակ բանաղնեղու համար բերեցին ինձ ուրիշներ և կերակուր եփողն ինձ յանձնարարեցին ասելով՝ որ ամիսը երեսուն կողպէքով նա ինձ համար ինչ ուզեմ կեփի, եթէ ցանկանամ ջոկ ուտել և ինձ համար ուտեստ առնեմ... Ի՞նչ ասել կուզի, նրանք ինձնից դրամ փոխ առան և նոցա-

նից ամեն մէկը միայն առաջին օրը փող ուղելու էր զալիս երեք երեք անգամ:

Աղնուական եղածների վրայ տաժանակրութեան մէջ առհասարակ խոժոռ ու առելութեամբ են նայում:

Չընայելով որ նրանք արդէն զրկուած են լինում իրենց բոլոր իրաւունքներից և լիովին հաւասարվում են մնացեալ կալանաւորներին, — այնուամենայնիւ կալանաւորները երբէք իրենց ընկեր չեն ճանաչում նրանց: Այդ դիտակցական համոզմունքով էլ չեն անում, այլ այդ այնպէս՝ բոլորովին անկեղծ սրտով, անդիտակցօրէն: Նրանք անկեղծ սրտով մեզ աղնուական էին ճանաչում, չընայելով որ իրենք սիրում էին կատակ անել մեր անկման վրայ:

— Չէ, հիմի հերիք է, կայ: Նանի բալան ամեն օր շիւղոյ փլաւ չի ուտի, և այլն և այլն հաճոյախօսութիւններ:

Նոքա սիրով էին նայում մեր տանջանքների վրայ, որ մենք աշխատում էինք չըցոյց տալ նրանց: Մանաւանդ մեր հոգին հանում էին սկզբումը բանելիս, որովհետեւ մենք նոցա չափ ոյժ չունէինք և որովհետեւ չէինք կարողանում նրանց լիովին օգնել: Ամբօխի (և աւելի այդ տեսակ ամբօխի) վրատահութիւնը զրաւելուց ու սէրը շահելուց դժուար բան չըկայ:

Տաժանակրութեան մէջ մի քանի աղնուական մարդիկ կային: Նախ հինգ հոգի լեհացի: Նրանց վրայ երբ և իցէ առանձին կրխօսեմ: Տաժանակիրները սաստիկ չէին սիրում լեհերին, մինչև իսկ ռուս աղնուական աքսորեալներից աւելի չէին սիրում: Լեհերը (խօսքս միայն քաղաքական յանցաւորների վրայ է) նրանց հետ մի տեսակ բարակ, վերաւորիչ քաղաքավարութիւն էին պահում, խիստ խորշող էին և ամենէին չէին կարողանում կալանաւորների առաջ ծածկել իրենց զոլուանքը նրանցից, նրանք էլ այդ շատ լու էին հասկանում և միևնոյն տուրքն էին վճարում նոցա:

Ես պէտք է գրեթէ երկու տարի անկացնէի բանտում, որ տաժանակիրներից մի քանիսի սէրը զրաւէի: Բայց նոցա

մեծ մասը, վերջապէս, ինձ սիրեցին և ճանաչեցին իբրև «լաւ» մարդ:

Բացի ինձնից՝ ռուս ազնուականներից կային չորս հոգի: Մէկը մի ստոր ու կեղտոտ արարած էր, սարսափելի լրբացած, արհեստով լրտես ու մատնիչ: Նրա վրայ դեռ բանտը դալուց առաջ էի լսել և առաջին իսկ օրից ամենայն յարաբերութիւններս կտրեցի նրանից: Միւսը-այն Հայրասպանն էր, որի մասին արդէն խօսել եմ յիշատակարանումս: Երրորդը Ակիմ Ակիմիչն էր: Քիչ եմ տեսել ես այնպիսի խենթեր, ինչպէս այս Ակիմ Ակիմիչը: Յիշողութեանս մէջ նա խիստ է դրոշմուել: Նա բարձրահասակ էր, նուազ տկարամիտ, սարսափելի անդրադէտ, խիստ դատարկախօս և զերմանացու պէս ճշտապահ: Տաժանակիրները վերան ծիծաղում էին. բայց ումանք վախենում էլ էին նրա հետ բարեկամանալու՝ նրա կռուասէր, անհաւան ու յիմար բնավորութեան պատճառով: Առաջին քայլից նա նրանց հետ մտերմացաւ, յիշոյներ էր տալիս, մինչև անգամ կռիւ դրում: Զարմանալի ձևով ազնիւ էր նա: Անարդարութիւն կրնկաւոր թէ չէ՝ մէջ կրննէր, թէև իրան բանը չլինէր: Ծայրայեղութեան չափ միամիտ էր. նա, օրինակ, լեզուակռիւ անելով կալանաւորների հետ՝ երբեմն նրանց երեսովն էր տալիս որ գողեր են, և լուրջ համոզում էր նրանց, որ գողութիւն չանեն: Կովկասում նա պրապորշչիկի պաշտօնով էր: Ես առաջին իսկ օրից մօտիկացայ նրան և նա իսկոյն պատմեց ինձ իւր դործը: Կովկասումն էլ սկսել էր իր ասպարէզը իբրև իւնկեր հետեակ գնդում, երկար ծոռայել էր, վերջապէս սպայութիւն էր ստացել և ուղարկուել ինչ որ մի ամրոց, իբրև աւագ կառավարիչ: Նորան հարեան մի խաղաղասէր իշխան կրակ էր տուել նրա ամրոցը և վերան գիշերային յարձակում դործել. բայց այդ չէր յաջողուել: Ակիմ Ակիմիչը խորամանկութիւն էր արել և մինչև անգամ չէր էր ցոյց տուել՝ թէ գիտէ՝ ո՞վ է չարագործը: Մեղքը անխաղաղասէրների վրայ բարդեցին, իսկ մի ամսից յետոյ Ակիմ Ակիմիչը բարեկամաբար հիւր կանչեց իր մօտ իշխանին: Սա եկաւ առանց

մի բան կասկածելու: Ակիմ Ակիմիչը իր գունդը շարեց, իշխանին յանդիմանում ու երեսոյն էր տալիս ամենքի առաջ. ապացուցեց որ ամրոցներին կրակ տալն ամօթ է: Սյնտեղ-
ևետ էլ նրա ղլխի մի երկար աւետարան կարդաց, թէ այսուհետեւ ինչպէս պէտք է իրան պահի խաղաղասէր իշխանը. և վերջը գնդակահար արեց, որ և անմիջապէս ամենայն մանրամասնութիւններով իշխանութեանը տեղեկացրեց: Սյս ամենի համար նրան դատեցին, մահուան դատապարտեցին, բայց վճիռը մեղմեցին ու աքսորեցին Սիբիր. երկրորդ կարգի տա-
ժանակրութեան՝ ամրոցներում տասներկու տարով: Նա կատարեալ խոստովանվում էր, որ անկանոն է վարուել, ինձ ասում էր, որ իշխանին գնդակահարելուց առաջ էլ գիտէր այդ, գիտէր որ խաղաղասէրին պէտք էր օրէնքով դատել. բայց չընայելով որ գիտէր այս, նա կարծես ամենեւին չէր կարողանում իր յանցանքն իսկապէս ըմբռնել:

— Աստուծոյ սիրուն ախր. Ձե՞ որ նա ամրոցիս կրակ տուեց. ի՞նչ անէի, նրան գլուխ վեր բերէի, ի՞նչ է, դրա համար. ասում էր նա՝ պատասխանելով առարկութիւններիս:

Չընայելով որ կալանաւորները ծիծաղում էին Ակիմ Ակիմիչի խենթութեան վերայ, բայց այնուամենայնիւ նրան յարգում էին իւր ճշտապահութեան և շնորհքի համար:

Արհեստ չէկար, որ Ակիմ Ակիմիչը չիմանար: Նա հիւսն էր, կոշկակար էր, մաշկակար էր, ներկարար էր, ոսկերիչ էր, կաղապործ էր, և այս ամենը արդէն սովորել էր տաժանակրութեան մէջ: Նա ամեն բան ինքն իրան սովորում էր ու շինում. կընայէր մի անգամ ու կըշինէր: Նա շինում էր նմանապէս զանազան արկղներ, սալիաթներ, լուստերներ, մանկական խաղալիքներ էլ ու քաղաքումը ծախում էր: Սյսպիսով նրա մօտ փող-մող լինում էր և նա անմիջապէս բանեցնում էր այն աւելի ճերմակեղէնի, մի քիչ կակուղ բարձի վրայ, ծալովի ներքնակ էլ ձեռք գցեց: Նա ու ես միեւնոյն բռնատանն էինք տեղաւորուած և տաժանակրութեանս առաջին օրերը նա ինձ շատ լաւութիւններ արեց:

Բանտիցը բանելու ղնալիս՝ կալանաւորները երկու կարգ

շարվում էին պահականոցի առաջ. կալանաւորների առաջից ու յետևից շարվում էին պահապան զինուորները՝ հրացանները լցրած: Գալիս էին ինժինեռական սպան, ուղեցոյցը և մի քանի ինժիներ ստոր աստիճանաւորներ՝ բանի վրայ հրակողներ: Ուղեցոյցը համարում էր կալանաւորներին և խումբ-խումբ ուղարկում բանելու՝ ուր որ պէտք էր:

Ոմանց հետ ես էլ ճանապարհ ընկայ ինժինեռական արուեստանոցը: Իսկ մի ցածրիկ փոքրիկ շէնք էր՝ կանգնած մի մեծ բազում, ուր դիպուած էին այլ և այլ նիւթեր: Այստեղ կար դարբնոց, կպղագործանոց, հիւսնատուն, ներկանոց և այլն: Ակիմ Ակիմիչը այստեղ էր զալիս ու ներկանոցում բանում, ձէթ եփում, ներկեր շինուս և ներկում սեղանների ու կարասիքի ընկուղափայտը:

Մինչ սպասում էի որ ինձ կապեն, ես Ակիմ Ակիմիչի հետ խօսակցութեան մտայ առաջին տպաւորութիւններիս մասին բանտումը:

— Այո՛, ազնուականներին չեն սիրում, յայտնեց նա, — մանուսանդ քաղաքականներին, պատրաստ են ուտել, և այդ դարմանալու չէ: Նախ որ՝ դուք ուրիշ մարդ էք՝ նրանց նման չէք, երկրորդ՝ նրանք բոլորը առաջ կամ ճորտեր էին, կամ զինուորականներից են: Ինքներդ դատեցէք, կարո՞ղ են նրանք ձեզ սիրել: Ձեզ ասեմ՝ այստեղ ապրելը դժուար է: Իսկ Ռուսիայի կալանաւորների վաշտերում է՛լ աւելի դժուար է: Այ մեր մէջ կան այնտեղից, այնպէս մեր բանտը զովելուց չեն կշտանում, կտես դժոխքից դրախտն են եկել: Յաւը բանելումը չի: Ասում են այնտեղ, առաջին կարգումը, ոչ բոլորովին զինուորական է իշխանութիւնը, վարվում է զոնէ ուրիշ ձևով՝ քան թէ մեզնում: Ես այնտեղ չեմ եղել, բայց այդպէս են ասում: Դուրսը չեն սափրում, համազդեաս չեն հագնում, թէև սակայն այդ լաւ է, որ մեզնում համազգեստով են ու սափրած. այնուամենայնիւ աւելի կարգ կայ, ու աչքին էլ դուրեկան է: Միայն այս է, որ նրանց դուր չի գալի այդ: Ախր մի նայեցէ՛ք էլ, ինչ խուժան է, է՛: Մէկը զինուորի որդի է և զինուորացու, միւսը չերքէզներիցն է, երրորդը հերձուա-

Ծողներէց, չորրորդը օրտոյոքս զիւղացի է, ընտանիք, սիրուն երեկտէք թողել է հայրենիքում, հինգերորդը ջհուդ է, վեցերորդը՝ քնու, եօթերորդը՝ չըզիտեմ ո՞վ, և սոքա ամենքը ահա՛ պէտք է միասին ապրեն, ինչպէս որ լինի՝ իրար հետ հաշտուին, մի գաւաթից ուտեն, մի թախտի վրայ քնեն։ Ազատութիւնն էլ հօսքս տեղ մի բան չի,—աւելի պատառը գողտուկ միայն կարելի է ուտել, ամեն մի գրողը կօշիկներում պահել, և ամեն բանով բանա ու բանա է, ուրիշ չինչ... Ակամայ գլուխդ կըղժուի։

Բայց այդ արդէն զիտէի ես։ Ես աւելի ուզում էի մեր մայիօրի վրայ հարց ու փորձ անել։ Ակիմ Ակիմիչը գաղտնապահութիւն չարեց և յիշում եմ, տպաւորութիւնս բոլորովին հաճելի չէր։

Բայց դեռ երկու տարի ինձ վիճակուած էր նրա իշխանութեան տակ անցկացնել։ Ակիմ Ակիմիչը ինչ որ ինձ պատմել էր նրա վրայ, լիովին ճիշտ դուրս եկաւ, այն զանազանութեամբ, որ տպաւորութիւնը միշտ աւելի զօրեղ է, քան պարզ պատմութիւնը։ Սարսափելի էր այս մարդը՝ հէնց նրա համար, որ այդպիսի մարդը զրեթէ անսահման իշխանաւոր էր երկու հարիւր հոգու վրայ։ Ինք ըստ ինքեան, նա անկարգ ու չար մարդ էր, ուրիշ ոչինչ։ Կալանաւորների վրայ՝ ինչպէս իր բնական թշնամիների վրայ էր նայում, և այդ նրա առաջին ու զլխաւոր սխալմունքն էր։ Նա յիրաւի քանի մի ընդունակութիւններ ունէր, բայց նրա ամեն բանը՝ մինչև անգամ լաւն էլ՝ այլանդակուած կերպարանքով էր երևում։ Լինելով անզուսպ, չար, երբեմն բանտն էր ներս պըծնում մինչև իսկ զիշերները, իսկ եթէ նկատում էր, որ մի կալանաւոր ձախ կողքի վրայ կամ բերանքսիվէր է քնել, առաւօտը նրան պատժում էր. «քնիր, նշանակում է, աջ կողքիդ վրայ, ինչպէս հրամայել եմ»։ Բանտումը նրան աւտում ու նրանից վախենում էին, ինչպէս ժանտախտից։ Նրա դէմքը կապուտկած ու կատաղի էր։ Ամենքը զիտէին, որ նրա հոգին բոլորովին իր սպասաւոր Ֆեդիայի ձեռքումն էր. իսկ ամենից շատ նա սիրում էր իր առիւծանման Տրեգորկային, և քիչ մնաց որ դարդից խելքը կորցնէր, երբ որ Տրեգորկան

Հիւանդացաւ: Ասում են, որ նա վերան ողբում էր ինչպէս մի հարազատ որդու վրայ. մի անասնաբոյժի դուրս խրկեց և ինչպէս սովոր էր, քիչ մնաց որ հետը կռիւ զցի. յետոյ Փեղկայից լսելով որ բանտումը կայ մի կալանաւոր՝ ինքնու-անասնաբոյժ, որ շատ յաջող բժշկում է, անյապաղ կանչեց նրան:

— Ազատի՛ր. Ոսկու մէջ կըլծաղեմ քեզ, ազատի՛ր Տրեզորկիս, բղաւեց նա կալանաւորին:

Դա մի սիբիրցի զիւղական էր, խորամանկ, խելօք, յիւրաւի շատ՝ ճարպիկ անասնաբոյժ, բայց կատարեալ զիւղացի:

— Մտիկ եմ անում Տրեզորկային, պատմում էր նա վերջը կալ. նաւորներին, սակայն մայիօրին պցելելուց շատ յետոյ՝ երբ արդէն զործը բոլորովին մոռացուել էր, — նայում եմ ընկած է շունը բազմոցի վրայ, սպիտակ բարձը տակին. ախր տեսնում եմ, որ բորբոքումն է, որ հարկաւոր էր արին թողնել և շունը կըլաւանար, իրաւ որ զորդ եմ ասում: Համա ինձ ու ինձ միտք եմ անում, — բա որ չըլաւացնե՞մ, բա որ սատկի՞: Ձէ, ասի, ձերդ բարձր բարեճննդուլթին, ուշ էք կանչել. թէ որ երեկ կամ մէկ էլ օրը էս վախտին լինէր, կըսաղացնէի. համա հիմի չեմ կարող լաւացնել...

Այսպէս էլ մեռաւ Տրեզորկան:

Ինձ պատմում էին մանրամասն, ի՛նչպէ՞ռ ուղեցել էին մեր մայիօրին սպաննն: Բանտումը մի կալանաւոր կար: Մի քանի տարի կըլինէր որ նա մեզնում էր ապրում և յայտնի էր իւր հեղ բարք ու վարքով: Նկատում էլ էին, որ նա երբէք զրեթէ ոչ ոքի հետ չէր խօսում: Նրան էլ հէնց այնպէս էլ համարում էին իբրեւ մի տեսակ յիմար մարդ: Նա զրապէտ էր և ամբողջ վերջին տարին անդադար աստուածաշունչ էր կարդում, զիշերն էլ յերեկն էլ կարդում էր: Երբ որ ամենքը քնում էին, նա կէս-զիշերին վեր էր կենում, վառում էր ժամի մեղրամոմը, վառարանի վրայ ելնում, զիրքը բաց անում ու մինչ ի լոյս կարդում էր: Մի օր նա դնաց ենթասպային յայտնեց՝ որ չէ ուզում բանելու դնալ: Մայիօրին խմացում տուին. սա եփ եկաւ ու անյապաղ ինքն էլ արշաւեց եկաւ: Կալանաւորը յարձակուեց նորա վրայ առա-

ջուլց պատրաստած աղիւսով, բայց չըկաւ: Նրան բռնեցին, դատեցին սւ պատժեցին: Ամեն բան շատ արագ եղաւ: Երեք օր յետոյ նա հիւանդանոցում մեռաւ: Մեռնելիս ասաց, որ ոչ ոքի դէմ քէն չունէր, այլ ուզում էր միայն տանջուել: Նա սակայն հերձուածողների ոչ մի աղանդիցը չէր: Բանտումը նրա մասին յարգանքով էին յիշատակում:

Վերջապէս ինձ կապեցին: Մինչ այս մինչ այն՝ միմեանց ետեւից արուեստանոցն էին եկել քանի մի հացավաճառ աղջիկներ: Ոմանք բոլորովին փոքրիկ աղջկերք էին: Մինչև հասկն առնելը նրանք սովորաբար բոքոնները հետներն առած էին ման դալիս, մայրները թխում էին, իրենք էլ չախում: Հասակն առնելուց յետոյ՝ նրանք շարունակում էին ման դալ, բայց արդէն առանց բոքոնների. այդպէս էին սովոր դրեթէ միշտ: Կային և ոչ աղջիկներ: Բոքոնը մի դրոշ արժէր և զրեթէ բոլոր կալանաւորներն առնում էին:

Ես նկատեցի, որ մի կալանաւոր, հիւսն, արդէն մազերը ձերմակած, բայց կարմիր ժպիտն երեսին սիլբեբլի էր անում բոքոն ծախողների հետ: Սրանց զաւուց առաջ նա հէնց նոր էր վզին փաթաթել զումաշ կարմիր աղւուխը: Մի հաստ ու բոլորովին չեչտա զեղծկուհի նրա դալզահի վռայ դրեց իր թապախը: Նրանց միջև խօսակցութիւն բացուեց:

— Ինչու երեկ չեկաք այնտեղ, սկսեց կալանաւորը ինքնաբաւական ժպիտով:

— Ահա մաիկ արա: Ես եկայ, համա քեզ Միտկա էին կանչում, պատասխանեց աշխոյժ զեղծկուհին:

— Մեզ ուղեցին, թէ չէ անխափան տեղներումս կրլինէինք... Բայց երեկ չէ մէկ էլ օրը ձերոնք բոլորն եկել էին ինձ մօտ:

— Ո՞վ ու ո՞վ:

— Մարեաշկան եկել էր, Խաւրոշկան եկել էր, Չեկունդան եկել էր, Դիւղորոշուլայան եկել էր...

— Այ՛ս ինչ է, հարցրի ես Ակիմ Ակիմիչին, — մի՞թէ:

— Պատահում է, պատասխանեց նա խոնարհութեամբ աչքերը ցածրացնելով, որովհետեւ չափազանց ողջախոհ մարդ էր: Այդ՝ ի հարկէ՝ լինում էր, բայց շատ հազիւ ու մեծա-

մեծ դժուարութիւններով: Առհասարակ աւելի, օրինակի համար, խմելու՝ քան թէ պղպիտի դործի քամակից ընկնողներ կային, չընայելով բռնի կեանքի բնական բոլոր ծանրութեանը: Կանանց մօտենալ դժուար էր: Պէտք էր ընտրել ժամանակը, տեղը, պայման դնել, ժամադրութիւններ նշանակել, ծածուկ տեղեր որոնել՝ որ առանձնապէս դժուար էր, պահակաւոր ղինուորներին հաւանեցնել՝ որ աւելի էլ դժուար էր, և առհասարակ պէտք էր համեմատաբար անթիւ փող փչացնել: Բայց այնուամենայնիւ ինձ յաջողվում էր վերջը սիրային տեսարանների էլ ականատես լինել: Յիշում եմ, մի անգամ ամառը Իրախի ափին մենք երեքովս մի համբարանոցում էինք և ինչ որ մի թրծող Հնոց էինք վառում. պահակները բարի էին: Վերջապէս երեւոյին երկու «յուշարարներ», ինչպէս կոչում է նրանց կալանաւորները:

— Է, ի՞նչ էդպէս երկար բարակ նստեցիք. Ձվերկովենց տանը հօ չէիք, — հանդիպեց նրանց կալանաւորը, որի մօտ որ նրանք եկել էին և որը վաղուց սպասում էր նրանց:

— Ե՞ս երկար-բարակ նստեցի, քիչ առաջ կաշաղակը տրնկած սիւնի վրայ հօ ինձնից երկար էր նստած, ուրախ պատասխանեց աղջիկը:

Ի՞նչ աշխարհիս ամենաազտեղի աղջիկն էր: Ձեկունդան Հէնց սա էր. նրա հետ միասին էր եկել Դվուզրոշովայան: Սա հօ արդէն նկարագրելու բան չէր:

— Ձեզ հետ էլ վաղուց է որ չենք տեսնուել, շարունակեց իդամով՝ դառնալով Դվուզրոշովային. ի՞նչ է, կասես թէ լղարե՞լ էք:

— Կարելի ա: Առաջ ես ի՞նչպէս չաղ էի, համա հիմի — ասես թէ ասեղ եմ կուլ տուել:

— Միշտ ղինուորների հետ:

— Ձէ, էդ արդէն մեր վրայ չար մարդիկն են ձեր տկանջը լցրել, է՛, համա ի՞նչ կայ: Առանց կողակցի եմ ման դալի, ղինուորի էլ է սիրեմ:

— Համա դուք նրանց թողէք, մեզ սիրէք, մեզ մօտ փող կայ:

Պատկերը ամբողջացնելու համար երեւակայեցէք այդ իդամովին սափրած, շղթայած, զոլ-զոլ հազած ու պահակները հետը:

ԲՆՈՒԹԻՒՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ



ՏԻՊԵՐ ԵՒ ՏԵՍԱՐԱՆՆԵՐ



Հայկական աւան Ղորթի դեպի արևմտ:

Мѣстечко на берегу рѣки Чорохъ.

Автотипія Ангерера иъ Вѣнѣ.







Արդահան: Արմահովի բնակավայրը:
Ардаганъ.








Սիւսանի Բնի. դպրոցաց աշակերտները Վանի վիլայէթում:

Ученики сельской школы въ Ванскомъ вилайетѣ.

Автотипія Ангерера въ Вѣнѣ.








Հանդիսաւոր օր Վերսիսեան լճի մօտ Ս. Լեւոնեանցի Տ. փեշմալճեանի լուսանկարիչ:
 Праздничный день въ Эчмиадзинѣ у Нерсесовскаго пруда.



Group of people standing in a field, possibly a group of students or a community group, circa 1900.

ԱՐԱՔԱ

ՊԱՏԿԱՆԱԳԱՐԻ ՀԱՆԴԵՍ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ	5
Գարեգին եպ. Սրուանձաեան	8
Դրիգոր Արծրունի	11
Մահ Խորէն Նար-Պէյ արքեպիսկոպոսի	10

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Տաթևի վանքը. ԷՖէ	17
Այրի վանք կամ ս. Գեղարդ, Ս.	31
Գօշ-Մխիթարի վանքը. ԷՖէ	40
Հաղարծնոյ վանքը	43
Բանաստեղծութիւններ. Նուէր Հայ վարժապե- տին, Ս. Քաճալեանց	45

ԿՆՆՍԱԳՐԱԿԱՆ

Ստեփաննոս եպ. Մխիթարեան	47
-----------------------------------	----

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

Մեր Խէչօն, Պէրճ Պառլեանց	75
Ֆ. Դօստօեանի. Յիշատակարան մեռեալ տանից (Յաւե- լուածում)	1—48

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

Du Caucase au golfe Persique a travers L'Arménie, le Kur- distan et la Mésopotamie par P. Müller-Simonis.	
Կովկասից մինչև Պարսից ծոցը Հայաստանի, Քրդստանի և Միջագետքի վրայով, Միլլէր-Սիմոնի. Լ. Մ.	91

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

Նկարների մասին. Լ. Մ.	1—4
-------------------------------	-----



„ԱՐԱՔՍԻ“ ԱՅՍ ԳՐՔԻ ՆԿԱՐՆԵՐՆ ԵՒ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ

Բ Ն Ա. Գ Ր Ո Ւ Մ


1. Գիւլիզար.	5
2. Դրիգոր Արծրունի	10
3. Տաթևի վանքը: Մ. Փափաղեանի լուսանկարից: .	17
4. Այրի վանքը կա՞մ Ս. Գեղարդ: Տ. Փեշտմալձեանի լուս.	31
5. Գօշ Մխիթարի վանքը: Մ. Փափաղեանի լուսանկա- րից.	40
6. Հաղարծնի վանքը: Մ. Փափաղեանի լուսանկարից: .	43
7. Գէորգեան ճեմարանը	46
8. Ամասիա. Երմակովի լուսանկարից:	47
9. Աշոա Ողորմածի գերեզմանը: Պ. Վրոյրի լուսանկա- րից:	75

ԳՆՊԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԲԱԺՆՈՒՄ

10. Բիւզանդիոնի աշտարակների աւերակները Մարմարեայ ծովի ափում: նկար Յ. Այվազովսկու:
11. Լողանալույ՝ առաջ. նկար Գ. Սեմիրադսկու:
12. Հեքիաթի հերոսուհին. նկար Ֆելիքս Վիխերտի:
13. Պսիխէյա, նկար գերմանացի նկարիչ Կրէյլի:
14. Հայ գիւղացու վարուցանքը Արագածի ստորոտում, նկար Գ. Գաբրիէլեանցի
15. Ամառ, նկար Ռէտիկի, Գեղարուեստականի բաժնի շապկի առաջին:

Բ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Ը ՀԱՅԱՍՏԱՆ ՈՒ Մ

16. Հայկական աւան Ճորոխ գետի ափում:
17. ԱրդաՀան, Երմակովի լուսանկարից:
18. Միացեալ Ընկ. Վարդաց աշակերտները Վանի վի-
լայէթում:
19. Հանդիսաւոր օր Ներսիսեան լճի մօտ Ս. Էջմիածնում:
Տ. Փեշտմալձեանի լուսանկարից:



„ԱՐԱՔՍ“ ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՎԵՑԱՄՍԵԱՅ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԻՍԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է **3** ՌՈՒՐԼԻ
ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԳԻՐՔԸ ԱՌԱՆՁԻՆ ԱՐԺԷ . . . **2** Բ. **50** Կ.
ԱՄԵՆ ՄԻ ԳԻՐՔԸ ԲԱՂԿԱՆԱԼՈՒ Է 12 ԹԵՐԹԻՅ ՈՒԹԱԾԱԼ ԴԻՐՔՈՎ ԵՒ 16 ՆԿԱՐԻՅ

„ԱՐԱՔՍԻ“ 1892 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՓԱԿՈՒԱԾ Է

Բ Ա Յ Ո Ւ Ա Մ Է

«ԱՐԱՔՍԻ» 1893 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

**ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔԸ ԼՈՅՍ ԿԸՏԵՍՆԻ ԱՆՊԱՏՃԱՌ ԱՊՐԻԼԻՆ
ՀԱՐՈՒՍ ԺԱԻԱԼՈՎ ԵՒ ԵՐԵՍՈՒՆ ՆՊԱՐՈՎ**

„ԱՐԱՔՍԻ“ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՇԵՏ ԳՈՐԾ ՈՒՆԵՅՈՂՆԵՐԸ ԵՒ ԲԱԺԱՆՈՐԴ
ԳՐՈՒՈՂՆԵՐԸ ԴԻՄԵԼՈՒ ԵՆ ՍԻՄԵՈՆ ԳՈՒԼԱՄԻՐԵԱՆՅԻՆ ԸՆԴ ՄԻՇՏ ԱՅՍ ՊԱՐՁ ԵՒ
ՄԻԱՆԿԱՄԱՅՆ ԱՊԱՆՈՎ ՀԱՍՅԵՈՎ.

С.-Петербургъ. Симеону Гуламирянцу *chez* St. Peters-
bourg. Simeon Goulamiriantz.

